ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 7, 1952 Общественные науки

Վ. Պարսամյան

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ ժողովրդի դարավոր բարեկամությունը ռուս մեծ ժողովրդի հետ, հանդիսանում է մեր պատմության փառավոր գրվագներից մեկը։ Իր բազմադարյան պատմության մեջ հայ ժողովուրդը միշտ էլ լայն կապեր ու շփումներ է ունեցել Արևելքի ու Արևմուտքի մի շարք երկրների հետ, բայց դրանցից և ոչ մեկը այնպիսի խոշոր դեր չի կատարել նրա համար, ինչպես Ռուսաստանը։ Առանձնապես վերջին մի քանի հարյուրամյակների ընթացքում այնքան սերտ, այնքան մտերմական են եղել հայ-ռուսական հարաբերությունները, որ հազիվ թե կարելի լինի նշել տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի քիչ թե շատ աչքի ընկնող մի բնագավառ, ուր արտահայտված չլինի այդ հարաբերությունների բարերար ազդեցությունը։

Հայ-ռուսական հարաբերությունները ծնունդ են առել պատմական վաղ ժամանակներից։ Ռուսական և հայկական աղբյուրները, նյութական կուլտուրայի հուշարձանները ցույց են տալիս, որ հայերը ռուսների հետ կապեր են ունեցել տակավին Կիևյան պետության շրջանում և նույնիսկ դրանից էլ առաջ։ Հայ-ռուսական վաղ շրջանի այդ կապերի մասին առաջին գրավոր տեղեկությունները մեզ հաղորդում են Մովսես Կաղանկատվացին[1] (10-րդ դար), Սաեփանոս Տարոնեցին[2] (11-րդ դար), ինչպես և 11—12-րդ դարերի ռուսական աղբյուրները[3]։ Այդ շրջանում հայերը ռուսների հետ շփվում էին Սև ու Կասպից ծովերի, Կովկասի, Բյուզանդիայի ու Բալկանների վրայով։

Ռուս պատմարան Կարամզինը խոսելով 11—12-րդ դարերի Կիևյան Ռուսիայի առևտրի մասին, գրում է. «Ամեն տարի Կոստանդնուպոլսից Կիև էին գալիս առևտրական նավեր... Իտալացիք առևտրական ձեռնարկներ ունեին Հայաստանում թաթարների արշավանքից դեռևս մի քանի տարի առաջ... հույները, հայերը, հրեաները, գերմանացիք, մորավացիք, վենետիկցիք ապրում էին Կիևում, հրապուրվելով ռուսների հյուրընկալությունից և ձեռնտու ապրանքափոխանակությունից»[4]։

Նույն հեղինակի վկայությամբ Կիևի իշխան Վլադիմիր Մոնոմախը

---

[1] Մովսես Կաղանկատուացւոյ պատմութիւն Ազուանից աշխարհի, 1912, Թիֆլիս, էջ 385—386։

[2] Սաեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական, 1885, ՍՊԲ, էջ 276—277։

[3] „Полное собрание русских летописей", т. IX, 1862, том XI, 1897. М. Н. Тихомиров, Источниковедение истории СССР с древнейших времен до конца XVIII в., т. I, 1940.

[4] Н. М. Карамзин, История государства Российского, т. III, стр. 200—201, СПБ, 1816.

ժամանակ (1113—1125) Կիևում ապրում էին մեծ թվով հայեր, որոնցից առանձնապես հռչակ էր վայելում Վլ. Մոնոմախի բժիշկը[1]։

Կիևյան Ռուսիայի հետ հայերի ունեցած կապերի մասին ուշագրավ փաստեր են բերում նաև Մ. Բժշկյանը[2], Ս. Գլինկան[3], Հ. Քուշներյանը[4] և ուրիշները։

«Ռուս իշխանները,—գրում է Քուշներյանը,—հայերին առաջին անգամ Կիև են հրավիրել 1009 թվականին, Բոլեսլավի դեմ մղվող պատերազմում իրենց օգնելու համար... Հայերը Ռուսաստանի այլևայլ մասերից Կիև են անցել և բնակություն հաստատել Լվովում ու Լուցկում»[5]։

Մի այլ տեղ նա գրում է, որ 1062 թվականին Կիևի իշխանը հայերին օգնության հրավիրեց պոլովցիների դեմ կռվելու համար. հայերը ամուր թիկունք եղան նրան և շատ արտոնություններ ստացան[6]։

Կիևից բացի, որը Արևմուտքում և Արևելքում հռչակված տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կենտրոն էր, 10—12-րդ դարերում հայերը ռուսների հետ կապեր ունեին նաև Ցմուտարականում (Թաման) և Մերձվոլգյան քաղաքներում։

Արաբական ճանապարհորդ Ահմադ Իբն-Ֆադլանը, որը 10-րդ դարի սկզբին եղել է Վոլգայի բուլգարների մոտ, նկարագրելով իշխանի վրանը, գրում է. «Նարի վրանը շատ մեծ էր, տեղավորում էր հազար հոգի, հատակը ծածկված էր մեծ մասամբ հայկական գորգերով»[7]։

Հայ-ռուսական վաղ շրջանի հարաբերությունների պատմության համար արժեքավոր է նաև Գրիգոր վարդապետ Տուտեորդու (12-րդ դար) կաթողիկոսին գրած մի նամակը։ Հայտնի է, որ բյուզանդական կայսրությունը խիստ ճնշման ու հալածանքի քաղաքականություն էր վարում ոչ միայն հայ ժողովրդի, այլև հայկական եկեղեցու դեմ։ Այդ կապակցությամբ հայ եկեղեցու ներկայացուցիչները որոշում են ի թիվս այլ ազդեցիկ եկեղեցիների, դիմել նաև «մեծափառ եկեղեցւոյն ռուսաց», խնդրելով «պատշաճս ի նոցանէ»[8]։ Մեզ հայտնի չէ, թե ինչ ընթացք է ունեցել այդ դիմումը, բայց 12-րդ դարում բյուզանդական ագրեսիայի դեմ ռուսական եկեղեցու օգնությանը դիմելու գաղափարն ինքնին ուշագրավ երևույթ է։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում 12-րդ դարում Կովկասի ունեցած կապերը Ռոստով-Սուզդալյան իշխանության հետ։ Ռոստով-Սուզդալի իշխան Անդրեյ Բոգոլյուբսկու որդի Յուրի Բոգոլյուբսկին, որը Վրաստան էր եկել և ամուսնացել Թամար թագուհու հետ, ակտիվ մաս-

---

[1] Н. М. Карамзин, История государства Российского, т. III, стр. 212, СПБ, 1816, տես նաև проф. Л. А. Оганесян, История медицины Армении, т. II, стр. 66—70, Ереван, 1946.

[2] Մ. Բժշկեան, ճանապարհորդութիւն ի Լեհաստան, 1830, Վենետիկ, էջ 84—85։

[3] С. Глинка, Обозрение истории армянского народа, ч. II, стр. 232, Москва 1833.

[4] Հ. Քուշնեբեան, Պատմութիւն գաղթականութեան Խրիմու Հայոց, 1895, Վենետիկ։

[5] Նույն տեղում, էջ 187։

[6] Նույն տեղում, էջ 186։

[7] „Путешествие Ибн-Фадлана на Волгу", перевод и комментарии под редакцией акад. И. Ю. Крачковского, 1939, стр. 73, ընդգծումն իմն է. Վ. Պ.։

[8] Տես ՀՍՍՌ Մատենադարան, ձեռագիր № 2966, «Արարատ», 1893 թ., № 1—5. Ա. Տեր-Միրայելյանի հոդվածը, Տեղեկագիր ՀՍՍՌ Գիտ. ակադ. հաս. դիա., 1948 թ. № 3. Ավ. Մնացականյանի «Մոսկվան միջնադարյան հայկական մի պոեմում» հոդվածը։

նակցություն է ունենում Անդրկովկասը սելջուկներից ազատագրելու գործին։ Յուրի Բոգոլյուբսկու գլխավորությամբ վրացական և հայկական զորքերը 1180-ական թվականներին սելջուկներից ազատագրում են Դվինը և Հայաստանի մի շարք այլ վայրեր[1]։

Առևտրական և ռազմական կապերից զատ հայերը ռուսների հետ ունեցել են նաև կուլտուրական կապեր։ 12—13-րդ դարերում հայերենից ռուսերեն են թարգմանվել «Գրիգոր Պարթևի վարքը» և «Հռիփսիմյան կույսերի վարքաբանությունը»։ Ռուսերենից հայերեն թարգմանվել է «Բորիսի (Ռոմանի) և Գլեբի (Դավթի) վարքաբանությունը»։ Նովգորոդի տաճարի ֆրեսկոներից մեկում պատկերված են Գրիգոր Լուսավորիչը և Հռիփսիմե կույսը։ 13-րդ դարում Անիի եկեղեցիներից մեկը զարդարել է ռուս նկարիչ և այլն[2]։

Ակադեմիկ Բ. Դ. Դրեկովը խոսելով Ռոստով-Սուզդալյան Ռուսիայի և Անդրկովկասի կուլտուրական կապերի մասին, գրում է. «Նշանակալից էին Ռուսիայի կապերը Անդրկովկասի հետ... Վրացա-հայկական արվեստի ազդեցությունը իր արտահայտությունն է գտել Ռոստով-Սուզդալյան Ռուսիայի շինարարության բնագավառում (Դմիտրիի տաճարը Վլադիմիրում»)[3]։

Այսպիսով, բերված փաստերը ցույց են տալիս, որ դեռևս 10—13-րդ դարերում ռուսների ու հայերի միջև գոյություն ունեին առևտրական, ռազմական և կուլտուրական շփումներ ու կապեր։ Ճիշտ է, վաղ շրջանի այդ կապերն ու շփումները տակավին էպիզոդիկ բնույթ էին կրում, բայց դրանք կարևոր նշանակություն ունեցան երկու ժողովուրդների հարաբերությունների հետագա զարգացման համար։

13—14-րդ դարերից սկսած հայ-ռուսական հարաբերությունների շրջանը գնալով ընդլայնվում է։

13-րդ դարի սկզբներին Հայաստանը դեռ նոր էր շունչ քաշել սելջուկյան արշավանքներից, երբ ենթարկվեց մոնղոլական ավերիչ արշավանքների հարվածին։ Մոնղոլները, ինչպես ժամանակակից պատմիչ Կիրակոս Գանձակեցին է նկարագրում, մորեխի նման ծածկեցին Հայաստանի դաշտերն ու լեռները[4]։ Մոնղոլական տիրապետության շրջանում Հայաստանի տնտեսական կյանքը չտեսնված անկում ապրեց։ Ավերվեցին ու ամայացան երբեմնի շեն քաղաքները (Անի, Դվին, Կարս) և բազմաթիվ գյուղեր։ Բնակիչները ծանր հարկերից, սովից ու համաճարակից փրկվելու համար, սկսեցին մասսայաբար փախչել ու անցնել ուրիշ երկրներ։ Մոնղոլական արյունոտ լուծը, ինչպես ուրիշ երկրներում, այնպես էլ Հայաստանում, Մարքսի խոսքերով ասած՝ «ոչ միայն ճնշում, այլև վիրավորում ու մաշում էր նրան զոհ դարձած ժողովրդի հոգին»[5]։

Մոնղոլական տիրապետության շրջանում Հայաստանի քաղաքներից ու գյուղերից մեծ թվով հայեր գաղթում անցնում են Փոքր Ասիայի արե-

---

[1] С. Т. Еремян, Юрий Боголюбский по армянским и грузинским источникам, отдельный оттиск из XXIII тома, „Научные труды" Ереванского Госунта, 1946.

[2] Տես Л. М. Меликсет-Бек, Древняя Русь и Армения, отдельный оттиск из первого тома, „Сборник трудов" Ин-та языка АН Арм. ССР, 1946.

[3] Б. Д. Греков, Киевская Русь, Москва, 1949, стр. 429.

[4] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, 1908, Թիֆլիս, էջ 225։

[5] К. Маркс, Секретная дипломатия XVIII века.

վելյան շրջանները, Վրաստան, Հյուսիսային Կովկաս, Ղրիմ, Ռուսաստան, Լեհաստան և այլ երկրներ։ Հայերի այս նոր գաղթի հետևանքով 13—14-րդ դարերում նկատելի չափով աճում է նաև Ռուսաստանի և սլավոնական մյուս երկրների հայ բնակիչների թիվը։ Այստեղ, հայերը գտնելով կյանքի անհամեմատ ավելի նպաստավոր պայմաններ, զբաղվում են առևտրով, արհեստներով, երկրագործությամբ, մոտիկից շփման մեջ մտնում ռուսների և մյուս սլավոն ժողովուրդների հետ։

Առևտրական աշխույժ գործունեություն են հանդես բերում առանձնապես Ղրիմի հայերը, որոնց մի զգալի մասը գաղթել էին Անիից։

13—15-րդ դդ. մինչև Կաֆան թուրքերի կողմից նվաճելը (1475 թ.) Ղրիմի հայերը, Վենետիկի ու Ջենովայի վաճառականների հետ, իրենց ձեռքում էին կենտրոնացրել Սևծովյան ափերի հարուստ առևտուրը։ Կաֆայի շուրջը ստեղծվել էին մի շարք հայկական բնակավայրեր, կառուցվել բազմաթիվ եկեղեցիներ, ամրություններ։ Ղրիմի հայկական գաղութը անվանվում էր «Ծովային Հայաստան» (Armenia Maritima)։ Ռուսական առևտուրն էլ Փոքր Ասիայի, Անդրկովկասի, Կիլիկիայի հայկական թագավորության, Պարսկաստանի և մյուս երկրների հետ մինչև 15-րդ դարը գերազանցապես Ղրիմի վրայով էր կատարվում, որը և մեծապես նպաստում էր հայ-ռուսական կապերի ընդլայնմանը։

Ղրիմից բացի, մեծ թվով հայեր ապրում էին նաև Լեհաստանում, Գալիցիայում, Մոլդավիայում, Վալախիայում և Տրանսիլվանիայում։

14-րդ դարից սկսած մեծ հռչակ է ձեռք բերում Լվովի հայ գաղութը, որը Արևելյան Եվրոպայի ամենախոշոր հայկական կենտրոնն էր։ Լվովում ապրում էին մեծ թվով հայ առևտրականներ, արհեստավորներ, կուլտուրայի և արվեստի աշխատողներ։ Լվովում կային ամրոցի հայկական թաղամասեր, եկեղեցիներ, դպրոց, հայկական գատաստանագրքով առաջնորդվող դատարաններ, իսկ հետագայում հիմնվում է նաև հայկական տպարան և թատրոն։ Հայերից շատերն այստեղ աշխատում էին գիմնազիտական ասպարեզում, կատարում էին թարգմանի և այլ պաշտոններ։ Ինչպես Ղրիմի, այնպես էլ Լվովի հայերը, ակտիվ մասնակցություն էին ունենում Հարավային Ռուսաստանի, Լեհաստանի և Արևելյան Եվրոպայի մի շարք այլ երկրների ներքին ու արտաքին առևտրին։ Հայկական այս գաղութների միջոցով էին գերազանցապես տեղի ունենում հայ-ռուսական և հայ-լեհական հարաբերությունները։

Հայերի կապերը ռուսների և մյուս սլավոնական ժողովուրդների հետ այն աստիճան ամուր էր, որ երբ 1410 թվականին գերմանա-տևտոնական օրդենի շուն ասպետները արշավեցին սլավոնական հողերի վրա, նրանք ռուսների, լեհերի ու լիտվացիների հետ միասին ոտքի կանգնեցին գերմանացիների դեմ կռվելու համար։ Հայկական երկու գնդեր մասնակցեցին 1410 թ. հուլիսի 15-ին տեղի ունեցած Գրյունվալդի ճակատամարտին, որտեղ գլխովին ջախջախվեցին գերմանական զավթիչները։

Հայ-ռուսական կապերի ու շփումների կարևոր վայրերից էր նաև Աստրախանը։ Հին ժամանակներից սկսած ռուսները Կազանի ու Աստրախանի վրայով առևտրական կապեր ունեին Արևելքի երկրների հետ։ Ղրիմը թուրքերի կողմից գրավելուց հետո, Կազանի ու Աստրախանի նշանակությունը արևելյան առևտրի համար միանգամից բարձրացավ։ Ռուս վաճառական-

ները փորձեր արեցին առևտրական այս նոր ճանապարհով կապվել Արևելքի ու Մերձկասպյան երկրների հետ։ 15-րդ դարում Ռուսաստանի հետաքրքրությունը Արևելքի երկրների նկատմամբ այնքան էր աճել, որ Տվերի նշանավոր վաճառական Աֆանասի Նիկիտինը, Վասկո դա Գամայից 30 տարի առաջ, 1466—1472 թթ. Վոլգայի, Աստրախանի, Շամախու, Իրանի, Դիլանի, Պարսկաստանի վրայով հասավ մինչև Հնդկաստան[1]։

Մերձկասպյան և Մերձվոլգյան երկրներում Անդրկովկասի և Հայաստանի առևտրականները ինչպես առաջ, այս շրջանում ևս առևտուր էին անում ռուսների հետ։ Բայց, ինչպես կտեսնենք հետագայում միայն, 16—17-րդ դարերում, Աստրախանը դարձավ Ռուսաստանի արևելյան առևտրի գլխավոր կենտրոն։

Հայ-ռուսական հարաբերությունների զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ Մոսկովյան իշխանության հզորացումը և թաթարների դեմ նրա տարած պատմական հաղթանակը։

1380 թ. Կուլիկովյան ճակատամարտում տարած հաղթանակից հետո, երբ Մոսկովյան իշխանության շուրջը սկսեցին համախմբվել ռուսական հողերը, իրենց հայացքը դեպի Մոսկվա դարձրին նաև թաթարական լծի տակ տառապող հայերը։

Ընկեր Ստալինն ասում է, որ «Թուրքերի, մոնղոլների և Արևելքի մյուս ժողովուրդների արշավանքից պաշտպանվելու շահերը պահանջում էին անհապաղ կազմել արշավանքի թափը կասեցնելու ընդունակ կենտրոնացված պետություններ»[2]։

Մոսկովյան իշխանությունը իր շուրջն էր համախմբում ոչ միայն ռուսական հողերը, այլև իրեն հետ կապում թաթար-մոնղոլների լծի տակ հեծող ոչ ռուս ժողովուրդներին, այդ թվում և հայերին։ Պատահական չէ, որ 14—15-րդ դարերից սկսած միջնադարյան հայ պատմիչների (Ստեփաննոս Օրբելյան, Կիրակոս Գանձակեցի և ուրիշներ) և հայ գրողների (Ֆրիկ, Կ. Բաղիշեցի և ուրիշներ) գործերում ավելի հաճախակի ենք հանդիպում ռուսների ու Մոսկվայի մասին հիշատակությունների։ Ուշագրավ է, որ 14—15-րդ դարերի հայկական մի պոեմում մեծ համակրանքով է խոսվում Մոսկվայի մասին։ Մոսկվայի թագավորը պոեմում հանդես է գալիս որպես գլխավոր հերոս, ուժեղ և գեղեցիկ։ Մոսկվան բարձր է դասվում այնքան հռչակված Հռոմից[3]։

Մոսկվայի վերելքի, նրա տնտեսական և քաղաքական դերի բարձրացման այս շրջանում է, որ հայերն սկսում են կապվել նրա հետ, բնակություն հաստատել այնտեղ, հիմք դնել հայ գաղութի։ «Կասկածից վեր պետք է համարել,—գրում է Մոսկվայի հին պատմությանը լավատեղյակ, պրոֆ. Մ. Ն. Տիխոմիրովը,—քիչ թե շատ տևական հայ գաղութի գոյու-

---

[1] Տես „Хождение за три моря Афанасия Никитина 1466—1472 гг.", под редакцией акад. Б. Д. Грекова и чл.-корр. АН. СССР В. П. Адриановой-Перетц. 1948, М—Л.

[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 5, էջ 38։

[3] Տես Պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 27, 1948, պրոֆ. Ա. Աբրահամյանի «Ռուս ժողովուրդը և Մոսկվան միջնադարյան հայ մատենագրության մեջ» հոդվածը և ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, 1948, № 3. Աս. Մնացականյանի «Մոսկվան միջնադարյան հայկական մի պոեմում» հոդվածը։

թյունը Մոսկվայում, որը կազմված էր XV դարի սկզբում քաղաքի արվարձանում (посад) բնակվող հայերից[1]։ Նա ռուսական տարեգրությունից[2] բերում է մի ուշագրավ վկայություն այն մասին, որ 1390 թվականին Մոսկվայի հրդեհի ժամանակ այրվել է նաև ոմն հայ Աբրահամի տունը („Загореся посад за городом от Аврама некоего армянина"),[3] Այնուհետև, խոսելով արևելյան երկրների հետ Մոսկվայի ունեցած առևտրի մեջ հայերի մասնակցության մասին, պրոֆ. Մ. Ն. Տիխոմիրովը գրում է. «Հայ վաճառականները առևտրի մեջ մեծ գործունեություն էին հանդես բերում։ Նրանց միջոցով Վոլգայի վրայով տրանզիտային առևտուր էր կատարվում Ոսկե Հորդայի, Անդրկովկասի և Պարսկաստանի հետ...

Մոսկովյան առևտրական գործարքների մեջ հայերի մասնակցությունը բաց երևույթին աննշան չի եղել. դատելով այն մի քանի ակնարկներից, որոնց իմաստը մեզ համար պարզ կլինի միայն այն դեպքում, եթե ընդունենք, որ մոսկովյան հասարակության մեջ հայկական տարրը նկատելի է եղել[4]։ 14—15-րդ դարերում Վոլգայի վրայով Մոսկվայի հետ առևտուր կատարող արևելյան ժողովուրդների թվում ռուսական տարեգրություններում հիշատակվում են նաև հայերը[5]։

Այսպիսով, 13—15-րդ դարերում, Հայաստանի համար ստեղծված քաղաքական ծանր պայմանների հետևանքով, մեծ թվով հայեր գաղթում ու բնակություն են հաստատում Ռուսաստանում և հարևան սլավոնական երկրներում. ձկատելի չափով անում է Ռուսաստանի հայ բնակչության թիվը։ Հայերն իրենց նոր բնակավայրում գտնում են կյանքի ու աշխատանքի համեմատաբար նպաստավոր պայմաններ, մոտիկ կապեր են հաստատում ռուսների և սլավոնական մյուս ժողովուրդների հետ։ Ռուսաստանի հայ գաղութների միջոցով սովելի են ընդարձակվում ու ամրապնդվում հայ-ռուսական հարաբերությունները։

15—16-րդ դարերից սկսած հայ-ռուսական հարաբերությունները սկսում են զարգանալ միջազգային և ներքին նոր իրադրությունների պայմաններում։

1453 թվականին թուրքերը գրավում են Կոստանդնուպոլիսը. ընկնում է բյուզանդական կայսրությունը։ Այնուհետև թուրքական զավթիչները գրավում են Բալկանները, Ղրիմը, Փոքր Ասիան, Միջագետքը։ Կոստանդնուպոլիսը թուրքերի ձեռքն ընկնելուց և 1498 թվականին Վասկո դա Գամայի կողմից Հնդկաստանի ծովային ճանապարհը հայտնագործելուց հետո, հինովին փոխվում են միջազգային առևտրական ուղիները։ Հայաստանի վրայով անցնող հնագույն տրանզիտային առևտրական ճանապարհը կորցնում է իր նշանակությունը։

16-րդ դարի սկզբներից երկարատև պատերազմներ են սկսվում թուրքերի ու պարսիկների միջև։ Հայաստանը դառնում է թուրք-պարսկական ավերիչ պատերազմների թատերաբեմ և նյութական ու մարդկային չափազանց մեծ կորուստներ է ունենում։ Թուրքական զավթիչները անխնա կեր-

[1] М. Н. Тихомиров, Древняя Москва, 1947, Москва, стр. 142.
[2] „Полное собрание русских летописей", т. XVIII, стр. 140.
[3] М. Н. Тихомиров, Древняя Москва, стр. 142.
[4] Նույն տեղում, էջ 142—143։
[5] П. С. Р. Л., т. XVIII, стр. 104.

պով կողոպտում, ավերում ու ամայացնում էին Հայաստանի գյուղերն ու քաղաքները, կասեցնում ու ետ մղում երկրի տնտեսական զարգացումը։ Ժամանակակից պատմիչ Առաքել Դավրիժեցին (1595—1669) նկարագրելով թուրքերի ավերածությունները, գրում է. «Զամենայն գեղօրայս գաւառացն Արարատու յաւեր և յապականութիւն դարձուցինք»[1]։ Զաքարիա Քանաքեռցին (1627—1700) նկարագրելով 17-րդ դարի Երևանի խանության ծանր վիճակը, գրում է. «Եւ էր տագնապ մեծ յաշխարհին Արարատեան... բազմացան աւազակք ի ճանապարհի. և գողք ի շէնս. վասն այս պատճառի ոչ ոք կարէր գնալ ի ճանապարհ, զի կողոպտէին։ Եւ ի բազում եկեղեցիս մտին գողք և աւէր առին։ Եւ այսպէս կար երկիր ամենայն ի մէջ բազում տառապանաց»[2]։

Թուրքիան և Պարսկաստանը 1639 թվականին Հայաստանը վերջնականապես բաժանում են իրար մեջ, ըստ որում Հայաստանի արևմտյան մասը ընկնում է թուրքական լծի տակ, իսկ հյուսիս-արևելյանը՝ պարսկական։ Հայ ժողովրդի պատմության մեջ սկսվում է ծանր ու մռայլ մի ժամանակաշրջան, երբ, ինչպես Ի. Վ. Ստալինն է ասում, «...պարսկական ու թուրքական ասիմիլատորները հարյուրավոր տարիներ ծվատում, խոշտանգում ու բնաջնջում էին հայ և վրացի ազգերին»[3]։

Այն ժամանակ, երբ թուրքական ու պարսկական էքսպանսիայի հետևանքով Հայաստանի տնտեսական և կուլտուրական կյանքը անկում էր ապրում, Ռուսաստանը, ընդհակառակը, տնտեսապես և քաղաքականապես ավելի ու ավելի աճում ու զարգանում էր, ձեռք բերելով միջազգային խոշոր նշանակություն։ Ռուսական ազգային պետության կազմավորումը Իվան III-ի և բազմազգ պետության կազմավորումը Իվան IV-ի ժամանակ, մեծ չափով նպաստեցին երկրի տնտեսական զարգացմանը։ Այդ շրջանում տեղի ունեցավ ռուսական հողերի համախմբումը, ներքին տնտեսական կապերի ուժեղացումը առանձին մարզերի միջև և տեղական մանր շուկաների համակենտրոնացումը մի ընդհանուր համառուսական շուկայի մեջ։ «Ռուսաց պատմության միմիայն նոր շրջանն է (մոտավորապես 17-րդ դարից սկսած), որ բնորոշվում է բոլոր այդպիսի շրջանների, երկրների ու իշխանությունների իսկապես փաստական միաձուլմամբ մի ամբողջության մեջ։ Այդ միաձուլումն առաջ էր եկել... շնորհիվ մարզերի միջև ուժեղացող փոխանակության, աստիճանաբար աճող ապրանքային շրջանառության, տեղական փոքրիկ շուկաների համակենտրոնացման ու մեկ համառուսաստանյան շուկայի ստեղծման»[4]։

Ռուսաստանի ներքին առևտրի ու արհեստների զարգացման հետ միաժամանակ արագ թափով զարգանում է նաև արտաքին առևտուրը։ 1553 թվականին հյուսիսային առևտրական ճանապարհը հայտնագործելուց հետո, Ռուսաստանը աշխուժ առևտուր է սկսում Անգլիայի, Հոլանդիայի և Շվեդիայի հետ։ Ռուսաստանի հյուսիսային քաղաքները (Նովգորոդ, Պսկով և այլն) հետզհետե վեր են ածվում առևտրական աչքի ընկնող կենտրոնների, իսկ Արխանգելսկը դառնում է Արևմուտքի հետ ունեցած ռուսական առևտրի գլխավոր կենտրոն։

1 Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ, 1896, Վաղարշապատ, էջ 83։

2 Զ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ ի պատմագրութիւն, մ. 2-րդ, էջ 89, 135, 1870, Վաղարշապատ։

3 Ի. Վ. Ս տ ա լ ի ն, Երկեր, հ. 11, էջ 393, 1948. Երևան, ընդգծումն իմն է, Վ. Գ.։

4 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հ. 1, էջ 178, Երևան։

16—17-րդ դարերում ռուսական առևտրի մյուս գլխավոր կենտրոնը Աստրախանն էր։ Գտնվելով Վոլգա-Կասպից ծով խիստ նպաստավոր առևտրական ճանապարհի վրա, 1556 թվականին Աստրախանը գրավելուց հետո Ռուսաստանն այն դարձնում է Արևելքի հետ ունեցած առևտրի գլխավոր կենտրոն։ Աստրախանի, ինչպես և Կազանի (1552 թ.) գրավումը մեծ չափով նպաստում են Ռուսաստանի տնտեսական և քաղաքական կապերի ամրապնդմանը Արևելքի հետ։ «Եթե Արխանգելսկը 16—17-րդ դարերում Արևմուտքի հետ ունեցած առևտրի գլխավոր կետն էր, ասում է ռուսական առևտրի պատմությունն ուսումնասիրողներից՝ Պ. Մելգունովը, ապա Ռուսաստանի հարավում, նույն այդ շրջանում, այդպիսի դեր կատարում էր Աստրախանը... Աստրախանում նույնիսկ ավելի շատ էին լինում զանազան ժողովուրդների ներկայացուցիչները»[1]։

Վ. Օ. Կլյուչևսկին գրում է, թե «17-րդ դարում Աստրախանը և Արխանգելսկը մոսկովյան պետության արտաքին առևտրի գլխավոր կետերն էին»[2]։

17-րդ դարի 30-ական թվականներին Աստրախան այցելած Գոլշտինյան դեսպանության քարտուղար Ադամ Օլեարի վկայությամբ, Աստրախանում ապրում և զանազան ապրանքների առևտուր էին անում ռուսները, պարսիկները, հայերը, թաթարները, բուխարացիք և ուրիշները։ Պետությունը այդ քաղաքից տարեկան ավելի քան 12 հազար ռուբլու մաքս էր գանձում։ Օլեարի ասելով 17-րդ դարում տարի էր լինում, որ ռուս առևտրականները մեկ միլիոն ռուբլուց ավելի մորթիներ էին վաճառում, 20 հազար ցենտներ մոմ[3]։ Պատմաբան Կարամզինը գրում է, թե «Պարսիկ և հայ առևտրականները ամենից ավելի Վոլգայի ափերին էին փնտրում մեր մորթիները»[4]։ Կլյուչևսկու ասելով Աստրախանից տարեկան 4—5 հարյուր հազար ռուբլու մորթիներ էին արտահանվում[5]։

Մոսկովյան պետության 16—17-րդ դարերի առևտրի մասին գրած իր ուսումնասիրության մեջ Ն. Կոստոմարովը ասում է, թե Իվան IV-ի ժամանակ «Աստրախանը սկսվում է լցվել Շամախու, Դերբենտի, Յուրգենցի և արևելյան այլ քաղաքների առևտրականներով»[6]։

Որպես Արևելքի հետ ունեցած ռուսական առևտրի գլխավոր կենտրոն, Աստրախանը 16—17-րդ դարերում դառնում է նաև հայ-ռուսական առևտրական կապերի հանգուցակետ։ Հայաստանից, Անդրկովկասից, Պարսկաստանից ու այլ վայրերից հայերը հետզհետե կենտրոնանում են Աստրա-

---

[1] П. П. Мельгунов, Очерки по истории русской торговли IX—XVIII вв., 1905, Москва, стр. 228—229.

[2] В. О. Ключевский, Сказания иностранцев о Московском государстве, 1918, Петроград, стр. 252.

[3] „Подробное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633, 1635 и 1639 годах, составленное секретарем посольства Адамом Олеарием", пер. с немецкого П. Барсов, 1870. Москва, стр. 455.

[4] Н. М. Карамзин, История государства Российского, т. VII, стр. 131, 1817.

[5] В. О. Ключевский, Сказания... стр. 297.

[6] Н. Костомаров Очерки торговли Московского государства в XVI—XVII столетиях, 1862, СПБ., стр. 43.

խանում, բնակություն հաստատում այնտեղ, առևտրով ու արհեստներով պարապում։ Այդ շրջանից սկսած հետզհետե կազմվում է Ռուսաստանի ամենախոշոր հայկական օջախներից մեկը՝ Աստրախանի հայ գաղութը։

Կազանի ու Աստրախանի գրավումից հետո, Արևելքի հետ աշխուժ առևտրական կապեր հաստատելու պրոցեսում ՝աճում է Ռուսաստանի հետաքրքրությունը նաև Անդրկովկասի ու Հայաստանի նկատմամբ և գործնական հունի մեջ դրվում կովկասյան ժողովուրդների հետ մոտիկ հարաբերություններ ստեղծելու հարցը։ Մոսկովյան պետությունը մի շարք անատմիներ դեսպաններ ու ճանապարհորդներ է ուղարկում Կովկաս և մանրամասն տեղեկություններ հավաքում երկրի բնակչության աշխարհագրական պայմանների, բնական հարստությունների, քաղաքական կազմի և այլ հարցերի վերաբերյալ[1]։

Ռուսաստանի քայլերը Կովկասի և Պարսկաստանի հետ տնտեսական-քաղաքական կապեր հաստատելու ուղղությամբ սերտորեն կապվում էին թուրքական էքսպանսիայի դեմ պայքարելու, Պարսկաստանը և Կովկասը հակաթուրքական կոալիցիայի մեջ ներգրավելու հարցի հետ[2]։

Աստրախանի գրավումը, Ռուսաստանի սահմանակից դառնալը Անդրկովկասին և Վոլգա-Կասպից ծով մագիստրալով Արևելքի հետ կատարվող առևտրի աշխուժացումը նոր պայմաններ ստեղծեցին հայ-ռուսական տնտեսական, ինչպես և քաղաքական ու կուլտուրական կապերի հետագա զարգացման համար։ Թուրքական ու պարսկական լծի տակ հեծող հայերը և Անդրկովկասի մյուս ժողովուրդները սկսեցին ավելի մեծ հույսեր կապել Հյուսիսի հարևանի՝ Ռուսաստանի հետ։ Պատահական չէ, որ Մոսկվայի հայերը ջերմությամբ էին ընդունում Իվան IV-ի Արևելքում տարած հաղթանակի լուրը։ Ռուսաստանի տնտեսական ու քաղաքական ազդեցության տարածումը Արևելքում, միանգամայն նպաստավոր եղավ նաև հայ առևտրականների համար։

16—17-րդ դարերում հայ վաճառականները աչքի ընկնող դեր էին կատարում Անդրկովկասի, Պարսկաստանի և Թուրքիայի առևտրի մեջ։ Նրանք գործուն մասնակցություն էին ունենում նաև Արևելքի ու Արևմուտքի միջնորդ առևտրին։ Մեծ հռչակ էին ձեռք բերել մասնավորապես Ջուղայեցի հայ վաճառականները (խոջաները), որոնք գերազանցապես զբաղվում էին մետաքսի, ներկերի և թանկագին քարերի առևտրով[3]։ 16-րդ դարի երկրորդ կիսում հայ առևտրականները մեծ քանակությամբ մետաքս և այլ ապրանքներ էին վաճառանում Շամախիում, ուր գալիս էին Ռուսաստանի, Պարսկաստանի, Բուխարայի, Խիվայի և արևմտա-եվրոպական

---

[1] „Посольства князя Мышецкого и дьяка Ключарова в Кахетии 1640—1643", издал М. Полиевктов, Тифлис, 1928, „Посольство стольника Толочанова и дьяка Иевлева в Имеретию 1650—1652", издал М. Полиевктов, Тифлис, 1926. *ՀՍՍՌ Գիտակադ. Տեղեկագիր, 1931, № 3, Ս. Արեշյանի* „Заметки русских путешественников об Армении" *հոդվածը և այլն։*

[2] *Տես* проф. Н. А. Смирнов, Россия и Турция в XVI—XVII вв., тт. I и II, 1946, Москва.

[3] *Տես Լեո, Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, Երևան, 1934։ Հայոց պատմություն, հատ. 3-րդ։ Երևան, 1946,* С. В. Тер-Аветисян, Город Джуга, Тбилиси, 1937.

առևտրականները։ Շամախին, ինչպես և Գիլանը, մետաքսի առևտրի հայտնի կենտրոններ էին։ 16—17-րդ դարերում հայ վաճառականները Թուրքիայի վրայով մետաքս և արևելյան այլ ապրանքներ էին տանում Վենետիկ, Ամստերդամ և եվրոպական մի շարք այլ քաղաքներ։ «Վենետիկը Ջուղայեցի խոջաների սիրած վայրն էր», գրում է պրոֆ. Լեոն[1]։ «1570 թվականին, ասում է Ալիշանը, Ջուղայեցիք շատ ապրանքով զրկած էին ի Վենետիկ»[2]։ Նոր Ջուղայի մասին գրած իր երկհատոր աշխատության մեջ Հ. Տեր-Հովհաննյանը, փաստական հարուստ մատերիալի հիման վրա, ցույց է տալիս, որ Ջուղայեցի հայ վաճառականները գնում էին Անգլիա, Հոլանդիա, Իտալիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Լեհաստան, Շվեդիա, Անդրկովկաս, Հնդկաստան, Թուրքիա, Արաբիա և այլ երկրներ։ «Բազուկ վաճառականութեան Ջուղայեցւոց,— գրում է նա,— ձգեցաւ ընդ ամենայն աշխարհ»[3]։

Ջուղայեցի հայ վաճառականներից շատերը՝ խոջա Փանոս, խոջա Պողոս, խոջա Պետրոս, խոջա Գերաք, Շահրիմանյաններ և ուրիշներ կապված էին Արևելյան հնդկական ընկերության, իտալական հայտնի առևտրական տների և ուրիշ առևտրական ընկերությունների հետ։ «Գերաք որդի տղայ Յակոբայ,— գրում է Տեր-Հովհաննյանը,— երևելի էր ի վաճառականութեան, որոյ տուր և առութեան բազուկ ձգեալ կայր յԵւրոպիայ, և ի կողմս Աստրախանայ և Գիլանայ»։

Հայ առևտրի պատմության համար բացառիկ հետաքրքրություն ներկայացնող մի աղբյուր, ինչպիսին 17-րդ դարի վաճառական Զաքարիա Ագուլեցու օրագրությունն է[5], ամբողջությամբ հաստատում է հայ առևտրական կապիտալի Ասիայում և Եվրոպայում ունեցած ծավալուն գործունեության փաստը։

Ուշագրավ է, որ Ջուղայեցի հայ առևտրականները իրենց տնտեսական գործունեության հետ միաժամանակ երևան են բերում նաև հասարակական, քաղաքական և կուլտուրական գործունեություն։ Նրանցից ոմանք ելնելով նոր, բուրժուական հարաբերությունների զարգացման պահանջներից, միջոցներ են տրամադրում դպրոցներ բացելու, տպարաններ հիմնելու և գրքեր տպագրելու համար։ Այսպես, օրինակ խոջա Պետրոսի ծախսով 1699 թվականին Ամստերդամի հայկական տպարանում տպագրվում է իր ժամանակի նշանավոր գիտնական Ղուկաս Վանանդեցու կազմած «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ և գրամից բոլոր աշխարհի, որ է գիտութիւն ամենայն տեսակ կշռոց, չափոց և գրամից, որով բոլոր աշխարհի վաճառականութիւնն վարի» աշխատությունը, որը բացառիկ արժեք է ներկայացնում առևտրի պատմության ուսումնասիրության համար։

Եվ այսպես, 16—17-րդ դարերում հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները, հատկապես նրա Ջուղայի հատվածը, ակտիվ մասնակցություն էին ունենում Արևելքի ու Արևմուտքի մի շարք երկրների առևտրին, աչքի

---

[1] Լեո, Խոջայական կապիտալ, էջ 56։

[2] Ղ. Ալիշան, Հայ-Վենետ., Վենետիկ, 1896, էջ 370։

[3] Յ. Տեր-Հովհաննեան, Պատմութիւն Նոր Ջուղայու, որ յԱսպահան, հատ. I, էջ 159, Նոր Ջուղա, 1880։

[4] Նույն տեղում, էջ 139։

[5] «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», Երևան, 1938։

ընկնող դեր կատարում այդ երկրների տնտեսական (և ոչ միայն տնտեսական) կապերի զարգացման գործում։

Թուրքիայի ու Պարսկաստանի հետ ունեցած հարաբերությունների ժամանակ Ռուսաստանը մոտիկից ծանոթացավ հայ առևտրականների այդ օրինակ կարևոր դերի հետ և աշխատեց նրանց օգտագործել իր տնտեսական-քաղաքական նպատակների համար։

Հատկապես թուրքական էքսպանսիայի ուժեղացման շրջանում, երբ նրանք վտանգի տակ էին դրել ոչ միայն Արևելյան Եվրոպան, Կովկասը, Պարսկաստանը, այլև դաշնակցած Ղրիմի իրենց վասալ խանի հետ, ձգտում էին գրավել Կազանն ու Աստրախանը, Ռուսաստանի համար առաջնահերթ խնդիր էր դառնում հակաթուրքական ուժերին համախմբելը և միացյալ ջանքերով թուրքական ագրեսիայի դեմ պայքարելը։ Ռուսաստանի թե տնտեսական, թե քաղաքական շահերը պահանջում էին, որպեսզի նա սերտ կապ ստեղծի թուրքական ագրեսիայի զոհ դարձած կովկասյան ժողովուրդների, այդ թվում և հայերի հետ: Հայերը, ինչպես վրացիներն ու ադրբեջանցիները, թուրքական դաժան լծից ազատագրվելու իրենց հույսերը կապելով հակաթուրքական կոալիցիայի, առաջին հերթին Ռուսաստանի օգնության հետ, ամեն կերպ աշխատում էին զորավիգ լինել նրան:

16—17-րդ դարերում թուրքիայի վրայով աշխուժ առևտուր էր կատարվում Արևելքի ու Արևմուտքի միջև։ Հայերը, ինչպես տեսանք, ակտիվ մասնակցություն ունեին այդ առևտրին։ Թուրքական կառավարությունը մեծ եկամուտներ էր ստանում հայ, հույն, ինչպես և արևմտա-եվրոպական վաճառականների տրանզիտային առևտրից։

Ռուսաստանը ձգտում էր, որպեսզի թուրքիայի վրայով Արևելքի ու Արևմուտքի միջև կատարվող առևտրի, հատկապես իր ժամանակի ամենաեկամտաբեր մետաքսի առևտրի ուղղությունը դարձվի դեպի Ռուսաստան, որպեսզի Ռուսաստանը դառնա միջազգային առևտրական կապերի հանգուցակետ։ Այդ էր պատճառը, որ ցարական կառավարությունը արտաքին առևտրի բնագավառում կիրառած իր մերկանտիլիստական քաղաքականության պայմաններում իսկ, հովանավորում ու պաշտպանում էր հայ առևտրականներին՝ տալով նրանց ազատ առևտրի իրավունք Ռուսաստանում։

Եթե Անգլիայի և Հոլանդիայի՝ իր ժամանակի միջազգային առևտրի մեջ ամենազորեղ այդ երկրների առջև վտանգավոր էր բանալ Ռուսաստանի դռները, ապա հայ առևտրականների համար այդ ոչ միայն վտանգավոր չէր, այլև օգտակար։ Հայ առևտրականները Ռուսաստանի պետական շահերին վտանգ չէին սպառնում, ընդհակառակը, օգնության հույսեր ու ակնկալություններ ունեին նրանից։ Այնուհետև արևելյան ապրանքները, գլխավորապես մետաքսը՝ Ռուսաստան և Ռուսաստանի վրայով Արևմտյան Եվրոպա տանելով, նրանք մի կողմից մեծ եկամուտ էին տալիս ռուսական արքունիքին, մյուս կողմից դրանով իսկ օժանդակում էին նրան՝ հակառակորդների դեմ մղվող տնտեսական-քաղաքական պայքարում։ Ռուսական կառավարությունը լավ էր ըմբռնում հայ առևտրականների այդ օրինակ դերը և ելնելով իր տնտեսական ու քաղաքական շահերից, հովանավորում էր նրանց։

Ինչ վերաբերում է հայ առևտրականներին, ապա նրանց համար էլ

նախընտրելի էր ռուսական շահավետ շուկան և ռուսական անհամեմատ մոտիկ ու ապահով արանզիտը՝ Անգլիա, Հոլանդիա, Շվեդիա գնայու համար, քան Թուրքիայի վրայով, որտեղ, ինչպես Էնգելսն է ասում, առևտուրը անելու եղանակը քարվան կարելն էր[1]։

Երկու կողմերի շահերի այսօրինակ ընդհանրության պայմաններում ընթացան հայ-ռուսական հարաբերությունները 17-րդ դարում՝ թևակոխելով զարգացման մի նոր, ավելի բարձր էտապ։

17-րդ դարի 20-ական թվականներից հայ առևտրականներն սկսում են սիստեմատիկաբար այցելել Ռուսաստան և առևտուր անել Աստրախանում, Մոսկվայում ու այլ քաղաքներում։ Մոսկվայի Հին ակտերի պետական կենտրոնական արխիվի (ЦГАДА) հայկական ֆոնդի փաստաթղթերից պարզվում է, որ 1626 թվականին «Ղզըլբաշի երկրից» առաջին անգամ Մոսկվա են եկել չորս հայ և երկու ադրբեջանցի առևտրականներ, իրենց հետ բերելով ավելի քան 3900 ռ. ապրանք[2], 1632 թվականին Թուրքիայից փախչում և Ղրիմի վրայով Ռուսաստան է գալիս Սարգիս Ավանեսովը՝ հուսալով այստեղ գտնել կյանքի ապահով պայմաններ։ 1640-ական թվականներին Մոսկվայի հետ առևտուր էին անում նաև Աստրախանի բնակիչ Թավաքալյանը և ուրիշները։

1659 թ. օգոստոսին Աստրախան, իսկ 1660 թ. մարտին Մոսկվա է գալիս Ջուղայեցի հայտնի հայ վաճառական խոջա Սահրադ Շահրիմանյանի որդի խոջա Զաքարը՝ իր 9 ընկերների հետ։ Զաքար Սահրադյանը, Ալեքսեյ Միխայլովիչի և նրա ընտանիքի անդամների համար բերում է մի շարք թանկարժեք նվերներ, այդ թվում Լեոնարդո դա Վինչիի հռչակավոր «Խորհրդավոր ընթրիքը» կոմպոզիցիայի պատճենը, հանված պղնձե թիթեղի վրա և նշանավոր ադամանդյա գահը, որի վրա կար 28 ֆունտ ոսկի, 8 ֆունտ արծաթ, 897 ալմաստ, 1298 հակինթ, 18030 փիրուզա։ Այդ բազկաթոռը, որն այժմ էլ պահպանվում է Կրեմլի թանգարանում (Զինապալատում), իր ժամանակին գնահատվել է 22,589 ռ. 60 կ.։ 1660 թ. մարտի 28-ին 'Բեսպանական պրիկազում գահի մասին տված իր տեղեկանքի մեջ Զ. Սահրադյանը գրում է. «Իմ խէր սիրեց մեծ թաքավորին թախտն թամամեց, ինձ արետ՝ թէ տար թաքավորին փեշքաշ արա. մեք էլ, մեր խէր էլ ետուր գնին խարար չենք, ումբրն մեծ թաքավորին[3]։

Դեսպանական պրիկազի ընդունելությունից հետո, 1660 թ. ապրիլի 12-ին խոջա Զաքարը իր տարած նվերներով[4] ներկայանում է պալատ՝ Ալեքսեյ Միխայլովիչին։ Նա հետաքրքրվում է գահը պատրաստող վարպետներով, գահի վրա եղած թանկագին քարերով և մի շարք այլ հարցերով։ Ալեքսեյ Միխայլովիչը առանձնապես հետաքրքրվում է Լեոնարդո դա Վինչիի «Խորհրդավոր ընթրիքը» նկարի պատճենի հեղինակով և հանձնա-

---

[1] Տես К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. IX, стр. 392.

[2] ЦГАДА (Центральный государственный архив древних актов), фонд Сношения России с Арменией, 1626, д. 6/№, л. 1—3.

[3] ЦГАДА, ф. Сношения России с Арменией, 1669, д. 6/№, л. 35.

[4] Զաքար Սահրադյանը, ինչպես ցույց է տվել Վ. Ոսկանյանը, նվերի անվան տակ փաստորեն վաճառել է իր տարած գահը և մյուս ապրանքները։ Տես Դիտ. ակադ. Տեղեկագրի 1947 թ. № 6-ում տպագրված նրա „Ново-торговый устав и договор с армянской торговой компанией в 1667 г.“ հոդվածը։

բարում է նրան ուղարկել Մոսկվա։ 1666 թվականին Զուղայի Հայ առևտրական ընկերության ներկայացուցիչ Ստեփան Ռամազամսկու հետ Ալեքսեյ Միխայլովիչին ուղարկած նամակում խոջա Զաքարը գրում է, որ «Խորհրդավոր ընթրիքը» նկարի հեղինակ «զապիլ ուստա» Բուդգանին, որի «հունարն ամենու վերայ առաւել էր, աղարկեցինք քրիստոսաշէն Մոսկոփս գոն մեծ թագաւորին զուլուղն տեղն կատարենն»[1]։ Մի այլ նամակում այդ մասին խոջա Զաքարը գրում է. «Էստի յառաջ քամինէգ՝ մին պղնձէ թանուքի վերայ ուտք հինգ շարաթ օրէն մանլիս քաշած մեծ թագաւորին պլուխ անք արէր։ շատագաթ էր լէր, ծառայէգ նորայ շինողն ուզեցել ին էն քարխանումն որ շինվել էր, մին ուստայ կէր, որ նորա բանն հունարն ամենու վերայ առաւել էր. անունն Թանրիվերան, որ է քրիստոնէի բան Բուդգանն»[2]։

1666 թվականին 40 առևտրականների ու արհեստավորների հետ Նոր-Զուղայից Մոսկվա է գալիս հիշյալ հայ նկարիչ Բոգդան Սալթանովը, որը աշխատանքի է ընդունվում Զինապարանում և տարիների ընթացքում Մոսկվայի կուլտուրական միջավայրում բարձր կատարելության հասցնելով իր արվեստը, դառնում է ռուսական նկարչության ամենախոշոր դեմքերից մեկը, ստեղծում իր շկոլան, ունենում իր հետևորդները։ Խոջա Զաքարի նամակը մեզ համար պարզում է ոչ միայն այն հետաքրքրական փաստը, որ 17-րդ դարի 50-ական թվականներին կատարված «Խորհրդավոր ընթրիքը» նկարի պատճենի հեղինակը հայ նկարիչ Բոգդան Սալթանովն է, այլև առաղանդավոր նկարչի ստեղծագործական կյանքի մի կարևոր էջը։ Այդ փաստն ինքնին արդեն ցույց է տալիս, որ մինչև Մոսկվա գալը Բոգդան Սալթանովը ճանաչված արվեստագետ է եղել։

1660 թ. մարտի վերջերից մինչև օգոստոսի 20-ը խոջա Զաքարը իր ընկերների հետ մնում է Մոսկվայում, կարգավորում է ռուսական արքունիքի և Սպահանի հայ առևտրական ընկերության հետագա փոխհարաբերությունների հարցը, գնումներ կատարում (գլխավորապես թանկարժեք մուշտակներ) և ցարի մի շարք հանձնարարություններով վերադառնում է Սպահան։

Զաքար Սարգսյանի այցելությունը Մոսկվա և նրա վարած բանակցությունները ռուսական արքունիքի հետ, կարևոր նշանակություն ունեցան հայ-ռուսական հարաբերությունների հետագա զարգացման համար։ Ինչպես տեսանք, Սարգսյանից առաջ 17-րդ դարի 20-ական թվականներից սկսած առանձին հայ վաճառականներ կապեր էին հաստատել Մոսկվայի հետ, 1656 թվականին Մոսկվայում եղել էր և Սարգսյանի գործակատար Ստեփան Ռամազամսկին, բայց դրանցից և ոչ մեկը այնպիսի նշանակություն չունեցան, ինչպես Սարգսյանի ուղևորությունը։ Զաքար Սարգսյանը պարսկական արքունիքին մոտ կանգնած, Սպահանի հայկական շրջաններում մեծ ազդեցություն ունեցող, Հայ առևտրական ընկերության աչքի ընկնող ղեկավարներից էր։ Նրա բերած խոշոր նվերները, ռուսական արքունիքի հետ նրա վարած բանակցությունները և ստանձնած

[1] ЦГАДА, ф. Сношения России с Арменией, 1666, д. № 1, л. 92.
[2] Նույն տեղում, էջ 97—98։

պաքտավորությունները պարզ ցույց են տալիս, որ նա առանձին, մասնավոր անձ չէր, այլ հարուստ, առևտրական լայն հնարավորություններ ունեցող կազմակերպության ներկայացուցիչ։ Այդ բանակցությունները միաժամանակ ցույց են տալիս, որ հայ առևտրական բուրժուազիան շրջագարձ էր կատարում դեպի Ռուսաստան։ Ռուսական արքունիքի հետ Զաքար Սահրադյանի միջոցով հաստատած Հայ առևտրական ընկերության կապերը հող պատրաստեցին 1667 թվականի հայ-ռուսական հայտնի առևտրական պայմանագրի համար։

17-րդ դարի 60-ական թվականները շրջագարձի կետ հանդիսացան հայ-ռուսական հարաբերությունների պատմության մեջ։

Մոսկովյան պետությունը ամրապնդելով իր տնտեսական և քաղաքական դիրքերը, ձգտում էր ապահովել իր արևմտյան սահմանները Լեհաստանի ու Շվեդիայի հարձակումներից, դուրս գալ Բալթիկ ծով և հարավային սահմանները՝ Թուրքիայի ու նրա վասալ Ղրիմի խանի հարձակումներից, դուրս գալ Սև ծով։ Հատկապես թուրքական էքսպանսիայի դեմ միացյալ ուժերով պայքարելու համար Ալեքսեյ Միխայլովիչը 1667 թվականին դեսպանություն ուղարկեց Անգլիա, Ֆրանսիա և Բոսանիա, դիվանագիտական բանակցություններ վարվեցին Վիեննայում, Վենետիկում Հռոմի պապի հետ, սակայն, Ռուսաստանի ջանքերը ապարդյուն անցան և հակաթուրքական եվրոպական կոալիցիան չստեղծվեց։

Բայց եթե եվրոպական պետությունների հակաթուրքական կոալիցիան չկազմակերպվեց արևմտա-եվրոպական մի քանի պետությունների, գլխավորապես Անգլիայի, դեպի Ռուսաստան ունեցած անբարյացակամ վերաբերմունքի հետևանքով, ապա այդ նույն շրջանում Ռուսաստանին հաջողվեց տնտեսական և քաղաքական սերտ հարաբերություններ հաստատել Թուրքիայի հակառակորդ Պարսկաստանի հետ։ Պարսկաստանի հետ հարաբերությունների կարգավորումը մեծապես նպաստեց ոչ միայն ռուս-պարսկական, այլև ռուս-հայկական կապերի ամրապնդմանը։ Ռուսաստանի և Պարսկաստանի համար ստեղծված ներքին և միջազգային կապերի նման կոնկրետ իրադրության պայմաններում էր, որ ծագեց ու հասունացավ հայ-ռուսական առևտրական պայմանագիր կնքելու գաղափարը, որն իրագործվեց 1667 թվականին։

Երականության մեջ այն կարծիքն է հայտնվել, թե տակավին 1619 թվականին Մոսկովյան պետության և հայերի միջև կնքվել է առևտրական հատուկ պայմանագիր[1]։

Ռուսական և հայկական աղբյուրներում, Մոսկվայի Հին ակտերի պետական կենտրոնական արխիվում, մեր ուսումնասիրությունների ժամանակ մենք չենք հանդիպել նման պայմանագրի։ Եթե իրոք 1619 թվականին Մոսկովյան պետությունը հայերի հետ առևտրական պայմանագիր կնքած լիներ, ապա դա չէր կարող որևէ հետք չթողնել։ Համենայն դեպս, 1619 թվականին հայ-ռուսական առևտրական պայմանագիր կնքելու փաստը

[1] Տե՛ս Известия Российской Академии истории материальной культуры, т. IV, стр. 79, 1925, Л. М. Меликсет-Бек, Древняя Русь и Армения, отдельный оттиск из первого тома „Сборник трудов" Ин-та языка Акад. наук Арм. ССР, 1946, стр. 113.

առայժմ չի հաստատվում, ուստի հայ-ռուսական առևտրական առաջին պայմանագիրը պետք է համարել 1667 թ. մայիսի 31-ի պայմանագիրը։

Այժմ տեսնենք, թե ինչ պայմանագիր էր այդ, երբ և ինչու կնքվեց, և ինչ նշանակություն ունեցավ։

Զաքար Սահրադյանի և մյուս հայ վաճառականների Մոսկվայից վերադառնալուց հետո, 1660—1666 թվականը Պարսկաստանից ոչ մի հայ առևտրական չգնաց Մոսկվա։ Այդ տարիների վերաբերյալ Մոսկվայի արխիվում էլ փաստաթղթեր չկան։ Խոջա Զաքարի և Հայ առևտրական ընկերության մյուս անդամների համար այդ տարիները, ըստ երևույթին, փոխադարձ համաձայնություն մշակելու և իրենց առևտրական գործերը վերադասավորելու, ռուսական արքունիքի հանձնարարությունները կատարելու, Ռուսաստանի հետ առևտուր անելու և պայմանագիր կնքելու հարցերը շահի հետ համաձայնեցնելու տարիներ են եղել։

1666 թ. փետրվարին Մոսկվա են գալիս Սպահանի Հայ առևտրական ընկերության ներկայացուցիչներ Ստեփան Ռամադամսկին և Գրիգոր Լուսիկովը։ Ե. Զևվակինը նրանց համարում է հայ առևտրական ընկերության հիմնադիրներ[1]։ Դա, իհարկե, ճիշտ չէ։ Ինչպես ցույց են տալիս դոկումենտները, նրանք ընկերության ներկայացուցիչներ էին։ Ստ. Ռամադամսկին Զաքար Սահրադյանի գործակատարն էր, նրա բարեկամը, աշխարհ տեսած մի վաճառական, որը նախքան այդ էլ եղել էր Ռուսաստանում, ինչպես և Հնդկաստանում, Թուրքիայում ու մի շարք այլ երկրներում։ Ընկերության և, մասնավորապես, խոջա Զաքարի կողմից լիազորված գլխավոր ներկայացուցիչը Ստեփան Ռամադամսկին էր և պատահական չէ, որ բոլոր դոկումենտներում նրա անունը բերվում է առաջին տեղում։ Ինչ վերաբերում է ընկերության մյուս ներկայացուցիչ Գրիգոր Լուսիկովին, ապա, ինչպես կտեսնենք, նա ևս Հայ առևտրական ընկերության աչքի ընկնող գործիչներից էր և միաժամանակ պարսկական շահի դեսպանը։

Մոսկվա գալով 1666—1667 թթ. Ստ. Ռամադամսկին և Գ. Լուսիկովը Հայ առևտրական ընկերության անունից բանակցություններ են վարում Ալեքսեյ Միխայլովիչի հետ՝ Ռուսաստանում և Ռուսաստանի վրայով արևմտա-եվրոպական երկրների հետ առևտուր անելու մասին։

Իրենց մի գիմումի մեջ նրանք գրում են. «Մեծ թագավոր, մենք օտարերկրացիներս, Ղզլբաշի երկրից եկել ենք Մոսկվա, մեր Հայկական ընկերության կողմից խնդրելու, որպեսզի թույլատրեք մետաքս և այլ ապրանքներ բերել Ռուսիա վաճառելու, ինչպես և Մեծ Նովոգորոդի, Արխանգելսկի ու Սմոլենսկի վրայով արտասահման տանելու»[2]։

Հայկական ընկերության ներկայացուցիչների բանակցությունները Մոսկվայում հաջողությամբ ավարտվեցին։ 1667 թ. մայիսի 31-ին կնքվեց հայ-ռուսական առևտրական հատուկ պայմանագիր, որը կազմել էր իր ժամանակի աչքի ընկնող պրոգրեսիվ գործիչ Ա. Լ. Օրդին-Նաշչոկինը։ Մոսկվայի ЦГАДА-ում պահվող այդ պայմանագրի բնագրի տակ հայերեն ստորագրել են Ստ. Ռամադամսկին՝ «Ջուլիայ չալայրիթնիս ես Ստեփանոսս Ջուղայեցի Ռամադամդանէնց Մուշեղի որդի ձեռ գրի, ինձ զարուլ այս և Գր.

[1] „Исторические записки", 1940 г. № 8, стр. 158.
[2] ЦГАДА, ф. Сношения России с Арменией, 1666, д. № 1, л. 13.

Լուսիկովը—«Փուլիսայ չալայրիՔնիս ես Գրիգորրս ջոգայեգի Լուսիկէնց Մարուքէ որդի ձեռ գրի, ինձ գարուլ այ»։

1667 թ. պայմանագրի համաձայն հայ առևտրականներն իրավունք էին ստանում մետաքս, ուղտի բուրդ, ներկեր և արևելյան այլ ապրանքներ բերել Ռուսաստան, ազատ առևտուր անել Աստրախանում, Մոսկվայում, Սմոլենսկում, Նովգորոդում, Արխանգելսկում և Ռուսաստանի այլ վայրերում։ Նրանց իրավունք էր տրվում նաև Ռուսաստանի վրայով իրենց ապրանքները տանել Արևմտյան Եվրոպա, Ռուսաստանի վրայով վերադառնալու պայմանով։

Մետաքսի առևտուրը Ռուսաստանում կենտրոնացնելու նպատակով ցարական կառավարությունը պայմանագրով պարտավորեցնում էր հայ առևտրականներին պարսկական մետաքսը բացառապես Ռուսաստան բերել։ Այնուհետև պայմանագրում սահմանվում են առևտրի պայմանները, Ռուսաստան ներմուծվող և արտահանվող տարբեր ապրանքների մաքսի չափերը, ռուսական արանգիից օգտվելու կարգը։ Ուշագրավ է, որ պայմանագրում ցայտուն կերպով արտահայտված է ցարական կառավարության մերկանտիլիստական քաղաքականությունը։ Պայմանագրի վերջում ցանկություն է հայտնվում, որ Ռուսաստանի և Պարսկաստանի միջև դրացիական հարաբերությունները և առևտրական կապերը դարեր շարունակվեն ու տարեց տարի ամրապնդվեն։

1667 թ. մայիսի 31-ի պայմանագրով Հայ առևտրական ընկերության գործակալ է նշանակվում Մոսկվայի վաղեմի բնակիչ անգլիացի առևտրական Թոմաս Իրեյնը, որը և գրավոր երդում է տալիս՝ առանց խորամանկության ու խարդախության կատարել իր պարտականությունները։

Պայմանագիր կնքելուց հետո Ռամազամսկին և Լուսիկովը իրենց ընկերների հետ, պայմանագրի համաձայն, մեծ առևտուր են անում Մոսկվայում և վերադառնում Պարսկաստան։ Սպահանի հայ առևտրական ընկերությունը և շահ Սուլեյմանը գոհունակությամբ են ընդունում Ռամազամսկու և Լուսիկովի կնքած պայմանագիրը։ Սուլեյման շահը, որ անձամբ մեծ օգուտ էր ստանում հայ առևտրականներից, Ալեքսեյ Միխայլովիչին ուղարկած հատուկ հրովարտակով հավանություն էր տալիս Հայ առևտրական ընկերության հետ կնքած պայմանագրին և խոստանում էր իր հերքին ամեն ջանք գործ դնել բարեկամական և առևտրական կապերը Ռուսաստանի հետ ամրապնդելու համար։

1667 թ. պայմանագիրը նշանակալից երևույթ էր հայ-ռուսական հարաբերությունների պատմության մեջ։ Դա մեզ հասած առաջին հայ-ռուսական պայմանագիրն է, որը պետական օրենքի ուժ է ունեցել, մտել է ռուսական օրենքների ժողովածուի մեջ և փաստորեն գործադրվել մինչև 18-րդ դարի սկզբները։ Այդ պայմանագիրը ինչպես հայերի, այնպես էլ Ռուսաստանի համար ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական նշանակություն ունեցող կարևոր փաստաթուղթ է։

Ցարական կառավարությունը իր հովանավորության տակ վերցնելով հայ առևտրականներին, ձգտում էր՝

ա) հայ առևտրականների միջոցով իր ձեռքը վերցնելով մետաքսի մենաշնորհը, դեպի Ռուսաստան գարձնել մետաքսի և, ընդհանրապես, արևելյան ապրանքների առևտրի ընթացքը և դրանով իսկ հարվածել ինչպես

Թուրքիային, այնպես էլ Թուրքիայի վրայով Արևելքի հետ առևտուր անող արևմտա-եվրոպական մրցակից պետություններին։

բ) Տնտեսական և քաղաքական սերտ կապեր հաստատել Պարսկաստանի և Գոլկասի հետ՝ հայերենի առևտրին զարկ տալու, իր դիրքերն այդ երկրներում ամրապնդելու և նրանց հետ միասին Թուրքական ագրեսիայի դեմ պայքարելու համար։

1667 թ. պայմանագիրը Արևելքի առևտրի ակտիվ ու գործունյա տարրի՝ հայ առևտրական բուրժուազիայի մոտ շրջադարձ ստեղծեց դեպի Ռուսաստանը։ Հանձին Ռուսաստանի, հայ առևտրական կապիտալը ձեռք բերեց մի նոր լայն ու շահավետ շուկա, տրանզիտային առևտրի ավելի կարճ ու ապահով ուղի և, վերջապես, Թուրքական հարստահարիչների դեմ կանգնած հզոր բարեկամ։ Այդպիսով, հայ առևտրական կապիտալը ոչ միայն նոր ու ավելի հաստատուն ուղու վրա դրեց իր գործունեությունը, այլև որոշ չափով ապահովեց իրեն Արևելքի երկրներում հետզհետե ուժեղացող արևմտա-եվրոպական առևտրի մրցությունից։

Ալեքսեյ Միխայլովիչի և Օրդին-Նաշչոկինի հետևանքն քաղաքականության արդյունք հանդիսացող 1667 թվականի Առևտրական նոր կանոնագրությունը և 1667 թվականի Հայկական կոմպանիայի հետ կնքած պայմանագիրը մեծապես ամրապնդեցին Ռուսաստանի, ինչպես և հայ առևտրականների դիրքերը միջազգային առևտրի մեջ։

1667 թ. մայիսի 31-ի պայմանագիրը հաստատուն հիմքերի ու լայն ուղիների վրա դրեց հայ-ռուսական տնտեսական կապերը և ամուր հող պատրաստեց նրանց քաղաքական կապերի համար։

1667 թ. պայմանագրով որոշված էին հայ-ռուսական առևտրին վերաբերող բոլոր հիմնական հարցերը, երկու կողմերի համար էլ մշակվել էին ձեռնտու պայմաններ։ Հայկական կոմպանիայի ներկայացուցիչները Պարսկաստան վերադառնալուց հետո անմիջապես ձեռնամուխ եղան պայմանագրով ստանձնած իրենց պարտավորությունների կատարմանը։ Սակայն, վերահաս դեպքերը՝ Շահ Աբբաս 2-րդի մահը 1667 թվականին, Պարսկաստանի մի շարք վայրերում առևտրականների համար ստեղծված անապահով պայմանները, 1668—1671 թթ. Ստեփան Ռազինի ապստամբության հետևանքով Վոլգա-Կասպից ծով առևտրական ճանապարհի փակվելը և Աստրախանի հայ առևտրականներին կողոպտելու դեպքերը, ընկերության ներսում ծագած տարաձայնությունները, միաժամանակ ընդհատեցին նրանց Ռուսաստան գալը։ Այդ հանգամանքը որոշ դժգոհություն առաջ բերեց ցարական արքունիքում, որը կապված էր նաև ռուս վաճառականների (գոստի) 1667 թվականի պայմանագրի հանդեպ ունեցած դժգոհության հետ[1]։ Եվ երբ 1672 թ. դեկտեմբերին Գր. Լուսիկովը կրկին Մոսկվա եկավ, Օրդին-Նաշչոկինին փոխարինած Գեսպանական պրիկազի պետ օկոլնիչի Ա. Ս. Մատվեևը նրա հետ ունեցած առաջին իսկ հանդիպման ժամանակ տրտունջներ ցրեց այդ դժգոհությունը։ Մատվեևը Լուսիկովին մեղադրում է, որ նա չկատարեց 1667 թ. պայմանագիրը, մետաքս չբերեց

[1] С. Соловьев, т. XII, стр. 272—276, А. Семенов, Изучение исторических сведений о Российской внешней торговле и промышленности, ч. I, стр. 23—29, СПб, 1859.

Ռուսաստան, որի հետևանքով դանձարանը մեծ ֆսսաններ կրեց։ Ապա նա հայտնում է, որ այսուհետև եթե Ռուսաստանը արևմտյան պետություն-նների հետ վիճեր ունենա, նրանց չի թույլատրվի Աստրախան և այլ քաղաքներ գնալ[1]։

Լուսիկովի բանակցություններն այս անգամ ևս հաջողությամբ վերջացան, չնայած ռուս վաճառականների բողոքների հետևանքով ստեղծված աննպաստ պայմաններին։ 1673 թ. փետրվարի 7-ին կնքվեց մի նոր պայմանագիր, որը տիմնականում հաստատում էր 1667 թ. «Մետաքսի պայմանագիրը», որոշ չափով սահմանափակելով հայ առևտրականների իրավունքները, ընդառաջելով ռուս առևտրականների պահանջներին։

Ինչպես 1667 թվականի, այնպես էլ այս պայմանագրով, ցարական կառավարությունը կրկին պարտավորեցնում էր հայ առևտրականներին ամբողջ մետաքսը բերել Ռուսաստան և առևտուր չանել Թուրքիայի վրայով։ Ի դեպ, կառավարության դժգոհության գլխավոր պատճառներից մեկն էլ հենց այն էր, որ հայերը հնարավորություն չունենալով Ռուսաստան գալու, շարունակում էին իրենց հնօրյա առևտուրը Թուրքիայի վրայով։ 1673 թվականի պայմանագիրը կրկին անգամ պարտավորեցնում էր Հայ առևտրական ընկերության անդամներին և մյուս պարսկահպատակներին՝ «Թուրքիայի վրայով և ոչ էլ այլ ճանապարհներով, մետաքս և այլ ապրանքներ չտանել գերմանական երկրներ (Արևմտյան Եվրոպա—Վ. Պ.)։ Եթե օտարերկրացիներ գան Պարսկաստան մետաքս գնելու, հայերը նրանց ևս չպետք է վաճառեն. ամբողջ մետաքսը պետք է բերվի Ռուսաստան»[2]։

Լուսիկովի բանակցությունները ռուսական արքունիքի հետ այս անգամ արդեն միայն առևտրական բնույթ չէին կրում։ Նա Մոսկվա էր եկել ոչ միայն որպես Հայկական առևտրական ընկերության ներկայացուցիչ, այլև որպես պարսկական շահի դեսպան և կարողանում է վարպետորեն զուգակցել առևտրական, դիվանագիտական-քաղաքական գործերը։

1673 թ. փետրվարի 7-ի պայմանագրով հարթվեցին բոլոր տարաձայնությունները ցարական կառավարության և Հայ առևտրական ընկերության միջև, որից հետո վերսկսվեցին հայերի սիստեմատիկ այցելությունները Ռուսաստան։

Դեկտեմբերին 1673 թ. հունվարին, երբ դեռ Լուսիկովի հետ շարունակվում էին բանակցությունները, ճանապարհին մեծ դժվարություններ հաղթահարելով, Մոսկվա հասավ Հայկական ընկերության ներկայացուցիչ Ստեփան Իսմայլովը, իր հետ բերելով Ալեքսեյ Միխայլովիչի և նրա բնտանիքի անդամների համար ավելի քան 9000 ռուբլու հաղվագյուտ թանկարժեք ապրանքներ ու գարդեր։ Իսմայլովը գալը, ինչ խոսք, իր ազդեցությունն ունեցավ բանակցությունների ընթացքի վրա։

1674 թվականի հունվարի 31-ին, Գ. Լուսիկովի հանձնարարական նամակով, Մոսկվա է գալիս հայ առևտրական Յաղուբ Գրիգորիը։ Նա իր հետ բերում է 50 փութ 28 ֆունտ մետաքս, որը վաճառում է դանձարանին՝ 1673 թվականի պայմանագրով սահմանված գներով։ 1675 թ. փետրվարին Մոսկվա են գալիս մի խումբ հայ առևտրականներ (Յաղուբ Պողոսով, Յա-

[1] С. Соловьев, т. XII, стр. 273.

[2] ЦГАДА. Ф. Сношения России с Арменией, 1673, д. № 3, л. 14.

կով Ավետիկով, Դավիթ Բարուև և ուրիշներ) իրենց հետ բերելով 1341 փութ մետաքս և մեծ քանակությամբ տարբեր տեսակի արևելյան ապրանքներ։ Հայ առևտրականների այս խմբի հետ էին նաև Շամախու դեսպանը և Պարսկաստանի լեհական դեսպան Բոգդան Գուրդիան, որոնց պատկանում էր բերված մետաքսի մի զգալի մասը։ Միայն բերված մետաքսը ժամանակի գներով (լավ տեսակը փութը 35 ռուբլի, հասարակ տեսակը՝ 30 ռուբլի) կազմում էր 41230 ռուբլի։

1675 թվականից սկսած հայերի կապերը Ռուսաստանի հոչակավոր մայրաքաղաք, քաղաքական, կուլտուրական, առևտրական ամենախոշոր կենտրոն Մոսկվայի հետ ավելի ու ավելի աշխուժանում են։ Աստրախանից բացի, որը հայկական առևտրի խոշոր կենտրոն էր, հայերն սկսում են իրենց առևտուրը կենտրոնացնել Մոսկվայում։ Այստեղ ևս նրանք մշտական իջևաններ են հիմնում, խանութներ բացում և անխափան առևտուր անում։ Մոսկվայում մինչ այդ գոյություն ունեցող հայ գաղութը հետզհետև ընդարձակվում է։

1675 թվականին հայ առևտրական Սարադ (ուրիշ դոկումենտներում Սարան) Լազրևին, Գրիգոր Իվանովին և նրանց 34 ընկերներին, որոնք մետաքս էին բերել Մոսկվա վաճառելու, Ալեքսեյ Միխայլովիչի կարգադրությամբ իջևան է տրվում Նիժնի Սադովնիկում։ Նույն տարում իջևան և խանութներ են տրամադրվում Զաքար Յակովլևին ու իր ութ ընկերներին և մի շարք այլ հայ առևտրականների։

Ծանոթանալով հայերի և ռուսների միջև կատարվող աշխուժ առևտրի հետ, 1676 թ. հոլանդական դեսպան Կոնդրատիյ ֆան Կլենկը, ելնելով Հոլանդիայի առևտրի զարգացման շահերից, գիմում է Դեսպանական պրիկազին, որպեսզի հայերին թույլ տրվի Արխանգելսկում առևտուր անել օտարերկրացիների հետ և մետաքս ու այլ ապրանքներ տանել Արևմուտք վաճառելու։ Հոլանդական դեսպանի գիմումի կապակցությամբ Ատյեռնի պալատ են հրավիրվում բոլոր նշանավոր վաճառականները, նրանց կարծիքն իմանալու համար։ Եվ չնայած նրան, որ ինչպես առաջ, այժմ էլ վաճառականները բացասական կարծիք են հայտնում օտարերկրացիներին ազատ առևտրի իրավունք տալու վերաբերյալ, այնուամենայնիվ դա չի խանգարում, որպեսզի ցարական կառավարությունը այս անգամ էլ բացառություն անի հայ առևտրականներին։ Կառավարության այդօրինակ հովանավորող քաղաքականությունից խրախուսված, 1676 թվականից հայ առևտրականները սկսեցին գնալ Արխանգելսկ և այնուհետև, Արխանգելսկի վրայով, Հոլանդիա ու այլ երկրներ։

1676 թ. մարտին Յաղուբ Պողոսովը մի խումբ հայ առևտրականների հետ գիմում է Ֆեոդոր Ալեքսեևիչին և խնդրում թույլ տալ իրենց առևտուր անելու Մոսկվայում, Արխանգելսկում և Արխանգելսկի վրայով արտասահմանի հետ։ Յաղուբ Պողոսովը և իր ընկերները մինչև Արխանգելսկ գնալը առևտուր էին անում Աստրախանում և Մոսկվայում։

1676 թվականին այս ընկերության անդամները գնում են Արխանգելսկ, այստեղի տոնավաճառանոցում գնում արտասահմանյան ապրանքներ (մահուդ, ասեղներ, պղնձե ժամացույցներ, կոզակներ և այլն), իրենց երկու ընկերների հետ ուղարկում Մոսկվա, իսկ իրենք անցնում Հոլանդիա։ Ըստ երևույթին, դա հայերի առաջին այցն էր Արխանգելսկ և առա-

ջին ուղևորությունը արտասահման՝ Արխանգելսկի վրայով։ Համենայն դեպս մեր ձեռքի տակ եղած դոկումենտները առայժմս այդ են ցույց տալիս։

1676 թվականին Արխանգելսկ գնալու համար Դեսպանական պրիկազին դիմում են նաև Յաղուբ Գրիգորևը, Իվան Մակարովը, Զաքար Կիրյակովը, Հայրապետ Մատվեևը, Սերգեյ Նազարովը, Յակով Ավետիքովը և մի շարք ուրիշ հայ առևտրականներ։ 1679 թվականին Արխանգելսկ են գնում Հայրապետ Մատվեևը և Բոգդան Մակարովը իրենց տեսա տանելով 215 փութ 20,5 ֆունտ մետաքս։ 1681 թվականին Յաղուբ Գրիգորևը Արխանգելսկ է տանում 157 փութ մետաքս։ 1682—1685 թթ. Արխանգելսկ և այնտեղից արտասահման գնալու իրավունք է տրվում նաև Դավիթ Բաղրամովին, Մատվեյ Գրիգորևին, Իվան Իվանովին, Գրիգոր Իսատցովին, Իլյա Եվդոկիմովին, Իվան Նազարովին և ուրիշների։ 1684 թվականին Հոլանդիայից Արխանգելսկի և Մոսկվայի վրայով Պարսկաստան է վերադառնում Յաղուբ Իրիգորևը, իր հետ բերելով մեծ քանակությամբ եվրոպական և ռուսական (Մոսկվայում գնած) ապրանքներ։ Մոսկվայի մաքսատանը նրա բերած ապրանքների քաշը հաշվում են 250 փութ, արժեքը 7140 ռ. և գանձում են մոտ 500 ռուբլի մաքս։

Բերված փաստերը ցույց են տալիս, որ 1670—1680-ական թվականներին հայերը աշխուժ առևտուր էին անում ոչ միայն Ասթրախանում ու Մոսկվայում, այլև Արխանգելսկում։ Եվ պատահական չէ, որ Ասթրախան—Վոլգա Մոսկվա Ներեխտա- Արխանգելսկ առևտրական բանուկ ճանապարհը միաժամանակ կոչվում էր «Հայկական առևտրական ճանապարհ» և կամ ռուսական ասացվածքների մեջ մտնում՝

„Не бойся на армянской дороге воров,
Бойся в Нерехте каменных домов".

17-րդ դարի 80-ական թվականների կեսերից հայ առևտրականներին թույլատրվում է Արևմտյան Եվրոպայի հետ առևտուր անել նաև Նովգորոդի վրայով։ Առևտրական այս ուղին ավելի կարճ ու շատ ավելի հարմար էր և շուտով հայ առևտրականները Արխանգելսկի փոխարեն սկսեցին Նովգորոդի վրայով գնալ Շվեդիա, Լեհաստան, Գերմանիա, Ֆրանսիա, Հոլանդիա, Դանիա, Անգլիա, Իտալիա և այլ երկրներ։ 1680—1690-ական թվականներին Ասթրախան-Մոսկվա-Նովգորոդ ուղին դարձավ հայ առևտրականների ամենաբանուկ ճանապարհը Արևմտյան Եվրոպայի հետ կապվելու համար։ Այլևս քիչ էր պատահում, որ նրանք գնային Արխանգելսկ։ Թուրքիայի վրայով նույնպես ջուղայեցի հայ վաճառականներից քչերն էին գնում Եվրոպա։

Հայերի առևտուրը Արևմտյան Եվրոպայի հետ Նովգորոդի վրայով ավելի լայն չափեր ընդունեց, քան Արխանգելսկի վրայով մինչև այդ նրանց կատարած առևտուրը։ 1686 թ. նոյեմբերին հայտնի հայ վաճառականներ Սաֆար Վասիլևը և Անուշ Վարդանովը առաջին անգամ Նովգորոդի վրայով սկսեցին առևտուր անել Արևմտյան Եվրոպայի հետ, իրենց հետ տանելով մետաքս և արևելյան այլ ապրանքներ։

1680—1690-ական թվականներին հարյուրավոր հայ առևտրականներ մեծ ու փոքր խմբերով Նովգորոդի վրայով սիստեմատիկաբար առևտուր

լին անում Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների հետ։ 1696 թ. փետրվար ամսին մի քանի տասնյակ հայ առևտրականներ դիմում են ցարական կառավարությանը՝ Նովգորոդի վրայով Շվեդիա գնալու համար։ Նրանք իրենց հետ տանում են ավելի քան 1794 փութ մետաքս, այդ թվում Գրիգոր Դավիդովը և ընկերները՝ 492 փ. 14707 ռ. արժողությամբ և վճարում են 737 ռ. մաքս (բերում ենք կլոր թվերով), Նիկոլայ Տարասովը իր եղբայր Միրզաբեկի հետ 358 փ. 10 ֆ. 8384 ռ. արժողությամբ և վճարում են 419 ռ. մաքս, Պավել Ստեփանովը և ընկ. 254 փ. 24 ֆ. 6830 ռ. արժողությամբ և վճարում են 891 ռ. մաքս և ճանապարհածախս, Սինան Իվանովը իր որդի Խաչիկի հետ 228 փ. 30 ֆ. 4543 ռ. արժողությամբ և վճարում են 583 ռ. մաքս և ճանապարհածախս, Ծարա Սահակովը 100 փ. 3000 ռ. արժողությամբ և վճարում է 381 ռ. մաքս և ճանապարհածախս, Խաչիկ Միխայլովը 95 փ. 4 ֆ. 2590 ռ. արժողությամբ և վճարում է 336 ռ. մաքս ու ճանապարհածախս[1]։

1697 թ. հունվարին արտասահմանից Նովգորոդի վրայով Մոսկվա են գալիս մի խումբ հայ առևտրականներ, Պարսկաստան վերադառնալու համար։ Մոսկվայի մաքսատան տվյալներից երևում է, որ նրանցից Իվան Իվանովը իր հետ բերել էր 5584 արշին հոլանդական մահուդ, որից 1493 արշին լավ տեսակի (большой руки) և 4091 արշին հասարակ տեսակի (меньшой руки), 4 դյուժին պղնձյա ունելիք, 14 դանակ, 3000 ասեղ, 2 հեռադիտակ, 30 ակնոց, 6 դյուժին ականջի օղ, 33 գլուխ շաքար (3 փութ), 12 արեգակի ժամացույց, 840 մատնոց, ժամացույցներ, խրուստալ, ափսեներ, հայելիներ, խաղալիքներ և այլ ապրանքներ։ Ընդամենը 210 փ. 10 ֆ. 6385 ռ. արժողությամբ, որի համար Մոսկվայի մաքսատանը վճարում է 659 ռ. մաքս և փոխադրավարձ։

Բանամենտուր Դավիդովը բերել էր 5689 արշին հոլանդական մահուդ և զանազան այլ ապրանքներ, ընդամենը 8808 ռ. արժողությամբ, որի համար վճարում է 776 ռ. մաքս և փոխադրավարձ։ Դասպար Անդրեևը բերել էր 8905 արշին լավ և հասարակ տեսակի հոլանդական մահուդ և զանազան այլ ապրանքներ, ընդամենը 11557 ռ. արժողությամբ և վճարում է 1108 ռ. մաքս և փոխադրավարձ։ Եսայի Խրիստաֆորովը բերել էր 4230 արշին մահուդ և բազմաթիվ այլ ապրանքներ, ընդամենը 5764 ռ. արժողությամբ և վճարում է 560 ռ. մաքս և փոխադրավարձ։ Նազար Իվանովը բերել էր 9884 ռուբլու մահուդ, ներկեր, պղնձյա արթուկներ, ոսկյա և արծաթյա իրեր, շաքար և այլ ապրանքներ, ընդամենը ավելի քան 3303 ռ. արժողությամբ և վճարում է 1301 ռ. մաքս և փոխադրավարձ[3]։

Նովգորոդի վրայով կատարվող առևտրի մեջ աչքի էին ընկնում նաև ջուղայեցի վաճառականներ Ստեփան Թովչենցը, Սիմոն Նազարովը, Բոգդան Մոսեսովը, Մակար Առաքելովը և ուրիշները։

1690-ական թվականներին, հատկապես Պյոտր I-ի՝ հայ առևտրականներին սիրաշահելու և հովանավորելու քաղաքականության շնորհիվ, էլ ավելի են ընդլայնվում հայ-ռուսական առևտրական կապերը։ Հայ-ռուսա-

---

[1] ЦГАДА, ф. Сношения России с Арменией, 1696, д. № 4, лл. 1—52.
[2] Նույն տեղում, 1697 г., д. № 3, лл. 2—3.
[3] Նույն տեղում, էջ 4—12։

կան առևտրի մեջ, մանավանդ Ակովի գրավումից հետո, հետևհետե երևում են նոր մարդիկ, որոնք 3, 7, 13 և մինչև իսկ 20-ից ավելի մարդուց բաղկացած խմբերով, մեծ մասամբ բարեկամական կապերով կապված, սիստեմատիկաբար առևտուր էին անում Ռուսաստանի և Ռուսաստանի վրայով Արևմտյան Եվրոպայի հետ։

Այսպիսով, 17-րդ դարի 60—70-ական թվականներից սկսած առևտրական սիստեմատիկ կապեր են հաստատվում հայերի և ռուսների միջև, որը 1680—1690-ական թթ. հետզհետե ընդլայնվում ու ամրապնդվում է։ Հայ առևտրականների շնորհիվ արևելքի ապրանքների, գլխավորապես մետաքսի առևտրի մի զգալի մասի ուղղությունը Թուրքիայից դարձվում է դեպի Ռուսաստան։ Մոսկվան, որը միջազգային առևտրի խոշոր հանգուցակետ էր, դառնում է նաև հայ առևտրականների սիրած վայրը, հայ-ռուսական տնտեսական կապերի ամենաաշքի ընկնող կենտրոնը։

Տնտեսական այս սերտ կապերի վրա քայլ առ քայլ խարսխվում են հայ-ռուսական քաղաքական և կուլտուրական հարաբերությունները։

Հայ-ռուսական դարավոր հարաբերությունները չէին սահմանափակվում և չէին էլ կարող սահմանափակվել միայն տնտեսական կապերի շրջանակներում։ Ինչպես արդեն նշել ենք, պատմական վաղ ժամանակներից սկսած ռուսների և հայերի միջև տնտեսական կապերի հետ մեկտեղ գոյություն ունեին նաև քաղաքական, ռազմական ու կուլտուրական կապեր։ Սակայն, վաղ շրջանի քաղաքական բնույթի այդ կապերը իրենց էությամբ տարբերվում էին քաղաքական այն հարաբերություններից, որոնք ստեղծվեցին հայերի ու ռուսների միջև 17—18-րդ դարերում։

17—18-րդ դարերի հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների հիմքում ընկած էր Հայաստանը Ռուսաստանի օգնությամբ թուրքական և պարսկական բռնակալության լծից ազատագրելու և Ռուսաստանին միացնելու գաղափարը։

Նախորդ դարերում այդպիսի հարց դրված չի եղել ոչ Ռուսաստանի և ոչ էլ հայերի կողմից։ Ճիշտ է, դեռևս 16-րդ դարի կեսերին հայ ազատագրական շարժման զարթոնքի շրջանում, Ստեփանոս Սալմաստեցին Հայաստանի ազատագրության հարցով Եվրոպայում ապարդյուն դեգերելուց հետո, գնում է նաև Լեհաստան և Ռուսաստան. 16—17-րդ դարերի ռուս-պարսկական և ռուս-վրացական դիվանագիտական բանակցությունների ժամանակ առանձին դեպքերում շոշափվում են նաև հայերին վերաբերող հարցեր[1], *Վրաստանից Ռուսաստան ուղարկված դեսպանությունների դիմում լինում են նաև հայեր, բայց այդ և նման փաստերը դեռևս հիմք չեն տալիս ասելու, թե հայ-ռուսական քաղաքական հարաբերությունները ծագել են հենց այդ դարերում։*

Հայ-ռուսական քաղաքական հարաբերությունները ծագել և որպես հայ-

[1] *Տես* „Памятники дипломатических и торговых сношений Московской Руси с Персией", под ред. Н. И. Веселовского, тт. I—III, 1890—1898 гг. С. Белокуров, Сношения России с Кавказом, вып. I, 1578—1613 гг. М., 1889, М. Броссе, Переписка на иностранных языках грузинских царей с российскими государями, 1639—1770, СПБ., 1861, М. Полиевктов, Материалы по истории грузино-русских взаимоотношений 1615—1640, 1937 и др.

ռուսական օրիենտացիա վերջնականապես ձևավորվել են 17-րդ դարի վերջում և 18-րդ դարի սկզբում:

Գրականության մեջ այս հարցի շուրջը մի քանի տարբեր և հակասական կարծիքներ են հայտնվել: Բուրժուական պատմաբան Ա. Երիցյանը միանգամայն սխալ կերպով անտեսել է մինչև 18-րդ դարը հայերի և ռուսների միջև եղած քաղաքական կապերը: «Հայերը,—գրել է նա,—Ռուսաստանի հետ հաղորդակցություններ ունեին դեռ ԺԸ դարից առաջ, բայց այս հարաբերությունները միմիայն առևտրական էին»[1]: Հայտնի կղերա-պահպանողական Դ. Էզովը հայ-ռուսական օրիենտացիայի ծագումը և հայ ազատագրական շարժումները կարելով ժողովրդից, կապել է Էջմիածնի հոգևորականության և կաթողիկոսների հետ: Այլ կերպ էլ չէր կարող վարվել մի մարդ, որի կարծիքով «հավատի համար նահատակությունը, կազմում է հայերի հասարակական կյանքի բնորոշ գիծը»[2]: Լիբերալ-բուրժուական պատմաբան պրոֆ. Լեոն, Մ. Ն. Պոկրովսկու հակամարքսիստական «շկոլայից» դիրքերից գրած իր «Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ» գրքում նույնպես միանգամայն սխալ և հակապատմական գնահատական է տվել 17—18-րդ դդ. հայ-ռուսական հարաբերություններին[3]:

Հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների ծագումը, մեր կարծիքով, ճիշտ չի լուսաբանել նաև ընկ. Աշ. Հովհաննիսյանը: 1921 թ. հրատարակած «Հայ-ռուսական օրիենտացիայի ծագման ինդիրը» աշխատության մեջ նա գրում է. «...մինչև 1720 թվականները ռուսական օրիենտացիան ոչ միայն հայ ժողովրդական մասսաների քաղաքական մտայնությունը չի սնել, այլև ուղեցույց չի հանդիսացել վարիչ դասերից որևէ մեկին նրա քաղաքական որոնումների ճանապարհին»[4]: 1915 թ. «Արարատ» ամսագրում նա գրում է. «Մեկնելով ԺԸ դարի հայ-ռուսական հարաբերությունների ընդհանուր բնույթից, հավանական չէինք համարել, որ դեռևս Հակոբ Ջուղայեցու ժամանակ հայերը լուրջ ակնկալություններ ունեին մոսկովյան թագավորությունից. ամենից քիչը հավանական էր թվում մեզ այն, որ հայերը իրենց քաղաքական բախտը կարող էին առանց արտաքին հարկադրանքի, այդքան վաղ կապել բացառապես Ռուսաստանի հետ»[5]:

Վերոհիշյալ հեղինակներից և ոչ մեկի հետ չի կարելի համաձայնել, քանի որ նրանց տեսակետները չեն հաստատվում գոյություն ունեցող փաստաթղթերով:

Այժմ մեկ առ մեկ քննության առնենք այդ փաստաթղթերը:

17-րդ դարի հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների վերաբերյալ գրականության մեջ հայտնի առաջին փաստաթուղթը՝ դա Հակոբ

---

1 Փորձ, 1877—78 թթ., № 1, էջ 367: Ընդգծումն իմն է. Վ. Գ.:

2 Г. А. Эзов. Сношения Петра Великого с армянским народом. Введение. стр. X, 1898, СПБ.

3 Լեո, Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, Երևան, 1934:

4 Աշոտ Հովհաննիսյան, Հայ-ռուսական օրիենտացիայի ծագումը. 1921, Էջմիածին, էջ VI:

5 Արարատ, 1915 թ., № 9—10, էջ 776:

կաթողիկոս Ջուղայեցու լատիներեն նամակն է, գրած ռուսական արքունիքին։

Դժբախտաբար հայտնի չէ, թե երբ է գրվել այդ նամակը. հավանական է, որ նա գրված լինի 17-րդ դարի 70-ական թվականների սկզբներին, Լվովից Էջմիածին եկած լատինագետ Ստեփանոս Լեհացու ձեռքով։

Նամակում Հակոբ կաթողիկոսը ցարին հայտնում է, որ պարսիկները ծանր հարկեր են գնում իրենց վրա, ճնշում, դավանափոխ են անում և խնդրում է օգնության հասնել, պաշտպանել իրենց, ազգել պարսիկների վրա, որպեսզի այսուհետև այդքան չտանջեն իրենց[1]։

17-րդ դարի հայ-ռուսական քաղաքական հարաբերություններին վերաբերող մյուս փաստաթուղթը դա Դանձասարի Պետրոս կաթողիկոսի նամակն է, գրած Ալեքսեյ Միխայլովիչին, որը հայտնաբերվեց Մոսկվայի Հին ակտերի Պետական կենտրոնական արխիվում մեր կատարած ուսումնասիրության ժամանակ։ Այդ նամակը, որի գրության թվականը նույնպես հայտնի չէ (հավանաբար գրվել է 1670—1671 թթ.), 1672 թվականին իր հետ բերել է Դ. Լուսիկովը՝ Սուլեյման շահի, Անտիոքի Մակար կաթողիկոսի, Հայկական առևտրական ընկերության անդամների և լեհական դեսպան Բոգդան Գուրդիայի գրությունների հետ միասին։ Պետրոս կաթողիկոսի նամակը, որն ըստ երևույթին գրված է Լուսիկովի պահանջով, ավելի շուտ վերաբերում է Ջուղայեցի հայ առևտրականներին, քան հայ ժողովրդին։ Նամակում ասված է. «...Դու մեծ թագավոր Գրիգոր Լուսիկովին և մյուս հայերին գրամոտա ես շնորհել, որը նորին մեծություն շահ Սուլեյմանը ընդունել է գոհունակությամբ և սիրով և քեզ մոտ է ուղարկում իր ներկայացուցիչ Գրիգոր Լուսիկովին՝ պայմանագրի մասին խոսելու, հույս ունենալով, որ նրա հայտարարությունը ձեզ համար, մեծ թագավոր, հաճելի կլինի։ Սպահանի հայ վաճառականները լսելով այդ մասին շատ գոհ են եղել և Գրիգորի հետ քեզ նամակ են ուղարկել... Աղոթում և խնդրում ենք քեզ, մեծ թագավոր, որպեսզի դուք ողորմեք առևտրականներին, որպեսզի նրանք ապահով գան քո երկիրը։ Աղոթում ենք նաև... որպեսզի քո և քո պետության փառքը բազմապատկվի, ինչպես Սողոմոն պաշտպանեք և մեր ժողովրդին, որպեսզի անօրենների մեջ մենք չմնանք առանց ապաքինության»[2]։

Էջմիածնի և Դանձասարի կաթողիկոսների դիմումները ռուսական կառավարությանը՝ պատմական ուշագրավ փաստաթղթեր են և անկասկած դրանք որոշ դեր կատարել են հայ-ռուսական օրիենտացիայի նախապատրաստման գործում։ Հետևաբար ճիշտ չեն այն հեղինակները, որոնք անտեսում և կամ թերագնահատում են այդ փաստաթղթերի տեղն ու դերը հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների պատմության մեջ։ Բայց քանի որ ոչ Հակոբ կաթողիկոսը և ոչ էլ Պետրոս կաթողիկոսը իրենց դիմումների մեջ չեն դրել Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը ազատագրելու և այդ գործում հայերի կատարելիք դերի հարցը, չեն առաջա-

[1] ЦГАДА, ф. Сношения России с Арменией, 1724, д. № 2, лл. 5—6. Արարատ, 1915, № 9—10, էջ 737։

[2] ЦГАДА, ф. Сношения России с Арменией, 1672, д. № 3, оп. 122, л. 3. Այս փաստաթղթի լրիվ տեքստը հրատարակվում է Պատմության ինստիտուտի կողմից տպագրության հանձնված „Армяно-русские отношения в XVII веке“ ժողովածուի մեջ։

գրել որևէ քիչ թե շատ ամբողջական քաղաքական ծրագիր և չեն հասել զգալի արդյունքի, ուստի ճիշտ չէր լինի այդ կաթողիկոսների անվան հետ կապել հայ-ռուսական օրիենտացիայի ծագումը, նրանց համարել հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների հիմնադիրներ, մանավանդ, որ հայտնի էլ չէ, թե ռուսական արքունիքը ինչ պատասխան է տվել այդ գիմումներին։

Ռուսական արքունիքի հետ 1672--1673 թթ. վարած իր առևտրական բանակցությունների ժամանակ, ինչպես արդեն նշել ենք, քաղաքական-դիվանագիտական բնույթի որոշ հարցեր է շոշափում նաև Ջուղայի Հայ առևտրական ընկերության և շահի ներկայացուցիչ Գրիգոր Լուսիկովը։ Դեսպանական պրիկազում առևտրական պայմանագրի մասին բանակցություններն ավարտելուց հետո, երբ Լուսիկովին հարցնում են՝ իրենց հետ ուրիշ գործ ունի թե ոչ, նա պատասխանում է, որ ունի, բայց վախենում է, որ շահն իմանա, ուստի հրաժարվում է գրավոր հայտնելուց, խոստանալով բանավոր հայտնել։

Ի՞նչ գաղտնի գործ էր, որի մասին Լուսիկովը վախենում էր գրավոր հայտնել Դեսպանական պրիկազին, դժբախտաբար մնում է անհայտ և դժվար է միայն այդ հայտարարությունների հիման վրա որոշակի բան ասել նրա քաղաքական գործունեության վերաբերյալ։ Համենայն դեպս Լուսիկովի հայտարարությունից երևում է, որ նա հակված էր դեպի Ռուսաստանը և պատրաստ էր ավելի հավատարմորեն ծառայելու ցարին, քան շահին։

Լուսիկովի քաղաքական գործունեության մասին որոշ տեղեկություններ կան նաև 1671 թվականին Ալեքսեյ Միխայլովիչին գրած նրա նամակներում։ Այդ նամակներից մեկում Լուսիկովը հայտնում է ցարին, որ նա կարգագրություն անի՝ Պարսկաստան գնացող իր դեսպանին պահել Աստրախանում, մինչև որ ինքը Մոսկվա կհասնի, որովհետև ինքը երեք բան է բերում, որոնց հետ ծանոթանալուց հետո, գուցե ավելորդ լինի դեսպանի Պարսկաստան գնալը։

Այնուհետև նա գրում է. «Դարձեալ զ(6) տարի այ որ մեծ թագաւորին ղուլուղեն ֆոկվել այմ գնացել զամբում, ր(2) տարի թամայմ շայ Սըլեմանին գըրուցն կացել այմ, գլխով, ապրանքով, խուգով քե մեծ թագաւոր ղուլուղ այմ արարել, վասն քրիստոնեութեան խաթեր համայր, աստուած սաղթուղուք անի կենդանի ֆեամ, էլ ղուլուղ կանեմ քե մեծ թագաւորս։

Այս փաստերը ցույց են տալիս, որ Հայկական կոմպանիայի ներկայացուցիչը առևտրական գործերի հետ միաժամանակ կատարում էր նաև քաղաքական հանձնարարություններ։ Ինչումն էր արտահայտում նրա քաղաքական գործունեությունը։

Լուսիկովի քաղաքական գործունեությունը հիմնականում կապված էր հակաթուրքական կոալիցիայի ստեղծման հարցի հետ[1]։ 17-րդ դարի 60—70-ական թվականներին թուրքական էքսպանսիայի վտանգը կախված էր ոչ միայն արևմտաեվրոպական մի շարք պետությունների, Լեհաստանի, Ռուսաստանի, Արևելյան Անդրկովկասի, այլև Պարսկաստանի վրա։ Նահա-

[1] Այս մասին տես ԳԱ. հաս. գիտ. բաժ. «Տեղեկագիր», 1948 թ. № 1, Վ. Ոսկանյանի «Հայ-ռուսական հարաբերությունները 17-րդ դարում» հոդվածը։

կան Պարսկաստանը, որն իր հերթին ագրեսիվ ձգտումներ ուներ Անդրկովկասի ժողովուրդների նկատմամբ և արդեն իսկ վավթել ու լծի տակ էր պահում Արևելյան Անդրկովկասը, թուրքական էքսպանսիայի դեմ պայքարելու համար ձգտում էր միանալ հակաթուրքական կոալիցիային։

Պարսկաստանում Լուսիկովն աշխատում էր շահին համոզել, որ Ռուսաստանը և Լեհաստանը իրար հետ համերաշխ են և պատերազմի դուրս կգան Թուրքիայի դեմ, որպեսզի շահը ևս միանա այդ բլոկին։ Ի դեպ, այս հարցում Լուսիկովը կոնտակտի մեջ էր նաև Պարսկաստանի լեհական դեսպան, ծագումով վրացի, Բոգդան Գուրգիայի հետ։

Ռուսաստանում որպես շահի դեսպան իր պաշտոնական պարտականությունները կատարելու հետ մեկտեղ, Լուսիկովը հանդես է գալիս նաև հայերի ու վրացիների շահերի պաշտպանությամբ։

Բայց, այդ բոլորով հանդերձ, Լուսիկովը իր նեղ դասային շահերից շատ հեռու չգնաց, չկարողացավ բարձրանալ քաղաքական դեկավար գործչի, հայ ազատագրական շարժմանն ուղղություն տվողի մակարդակին։ Ձնայած ռուսական արքունիքի հետ իր ունեցած սերտ կապերին ու հնարավորություններին, նա այդտեղ ոչ միայն չբարձրացրեց Հայաստանի ազատագրության հարցը, այլև, ինչպես հարկն է, հետամուտ չեղավ իր տարած դիմումներին ընթացք տալու գործին։ Լուսիկովի կարճատև քաղաքական գործունեության վերաբերող հատ ու կենտ փաստերը առայժմ հիմք չեն տալիս նրա մասին ավելին ասելու։

Այսպիսով, ինչպես ցույց են տալիս պատմական փաստերը, հայ-ռուսական օրիենտացիայի ծագումը չի կարելի անմիջականորեն կապել ոչ Էջմիածնի կաթողիկոսի, ոչ Գանձասարի պատրիարքի և ոչ էլ շահի դեսպան, ջուղայեցի հայ առևտրական Լուսիկովի անվան հետ։ Դրանք այս ու այն չափով կատարել են միայն նախապատրաստական դեր։ Ռուսական օրիենտացիան 17-րդ դարի վերջերին և 18-րդ դարի սկզբներին ծագել է պարսկական ու թուրքական բռնակալության դաժան լծի տակ հեծող հայ ժողովրդի մեջ և կապված է հայ ազատագրական շարժման մեծ ռահվիրա Իսրայել Օրու անվան հետ։ Ռուսաստանն այդ շրջանում միակ երկիրն էր, որը ոչ միայն ի վիճակի էր օգնելու Անդրկովկասի ժողովուրդներին, այլև խստորեն շահագրգռված էր Անդրկովկասի միացման խնդրով։ Ահա թե ինչու, հայ ժողովրդի առաջավոր մարդիկ, հայրենասեր քաղաքական գործիչները իրենց հայացքը դարձնում էին դեպի Ռուսաստան։ Հայ ժողովրդի ազատագրությունը կապում Ռուսաստանի հետ[1]։

Ճիշտ չեն այն հեղինակները, որոնք կարծում են թե մինչ 18-րդ դարի 20-ական թվականները ռուսական օրիենտացիան հայերի մեջ հող չի ունեցել և ուղեցույց չի հանդիսացել նրա քաղաքական որոնումների ճանապարհին։

Ընկեր Ստալինը նշում է, որ «Պատմությունն ընդհանրապես որևէ էական բան չի կատարում առանց դրա հատուկ անհրաժեշտության»[2]։ Եթե ռուսական օրիենտացիան մինչև 18-րդ դարի 20-ական թվականները հայ ժո-

[1] Տես Վ. Պարսամյան, Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, 1940, Երևան, էջ 16։ «Ա. Ս. Դրիբոեդովը և հայ-ռուսական հարաբերությունները», 1947, էջ 10—11։

[2] Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, 1951, Երևան, էջ 21։ (Ընդգծումը մերն է։ Վ. Պ.)։

ղովրդի մեջ հող չունենար, ապա չէին էլ կարող լինել ոչ Էջմիածնի կաթողիկոսի և Գանձասարի պատրիարքի դիմումները, ոչ Լուսիկովի բանակցությունները և ոչ էլ 1678 թվականի Էջմիածնի գաղտնի ժողովը և Արևմտյան Եվրոպայի ու Ռուսաստանի օգնությանը դիմելու քայլերը։

17-րդ դարի երկրորդ կեսում տեղի ունեցած քաղաքական այս կարևոր իրադարձություններն արդյունք էին հայ ժողովրդի և նրա իշխող խավերի առևտրականների՝ մելիքների, հոգևորականության մեջ առաջացած տրամադրությունների։ Հայ ժողովրդի տարբեր խավերը ունենալով հանդերձ տարբեր շահեր ու ձգտումներ, թուրքական ու պարսկական լծից ազատագրվելու իրենց հույսերը կապում էին Ռուսաստանի հետ։ Ճիշտ է, դեռևս 16-րդ դարի կեսերից որոշ հույսեր կապվում էին նաև Արևմտյան Եվրոպայի հետ, բայց հայ ժողովրդի հեռատես գործիչները շուտով նկատեցին, որ դա Հայաստանի ազատագրության ուղին չէր և երես դարձրեցին նրանից։

17-րդ դարի վերջում և 18-րդ դարի սկզբում մի կողմից Ռուսաստանի արևելյան քաղաքականության ակտիվացման, իսկ մյուս կողմից հայ ազատագրական շարժման աշխուժացման պայմաններում, հայ ժողովուրդը վճռական շրջադարձ կատարեց դեպի Ռուսաստանը, իր ազատագրությունը մեկ ընդմիշտ կապեց նրա հետ։ Հենց այդ շրջանում էլ վերջնականապես ձևավորվեց հայերի ռուսական օրիենտացիան, որի հիմնադիրը հանդիսացավ իր ժամանակի ամենաառաջավոր քաղաքական գործիչ, հմուտ դիվանագետ և ջերմ հայրենասեր Իսրայել Օրին։

Հայ-ռուսական հարաբերությունների այդ նոր ու ավելի բուռն զարգացման շրջանի պատմությանը կանդրադառնանք մի այլ հոդվածով։